



ISSN 1829-0469

ԵՐԱԺԻՇ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

Լույս է տեսնում 2005թ. դեկտեմբերից

03 (147) մարտ 2018

գինը՝ 100 դրամ

Հայ կոմպոզիտորական արվեստի 9-րդ փառատոնը նվիրված Գրիգոր Եղիազարյանին «ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՖԵՍՏ» ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ



Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի նախաձեռնությամբ, Հայաստանի Հանրապետության Մշակույթի նախարարության հովանավորությամբ 2018 թ. մարտի 5-9-ը, Երևանում անցկացրեցին «Հայ կոմպոզիտորական արվեստի 9-րդ փառատոնը»: Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը 9 տարի շարունակ իր անփոխարինելի տեղն ունի հայաստանյան արդի մշակութային կյանքում: Փառատոնի զվարճող նպատակն է հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների տարածումը երաժշտասերների լայն շրջանակներում: Փառատոնը նաև հնարավորություն է ստեղծում հայ երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարման համար: Սույն ամենամյա երաժշտական միջոցառումը յուրաքանչյուր անգամ նվիրվում է հայ կոմպոզիտորական արվեստի նվիրյալներից մեկին:

2

Звездные часы Эдуарда Айрапетяна

Эдуард Айрапетян – яркий представитель армянской композиторской школы. Прочный академизм этой школы, базирующийся на основах европейского классицизма и старой профессиональной музыки Армении, не утратил живую связь с фольклором, который продолжает питать всю инфраструктуру современной армянской музыки. Музыка второй половины XX века и первой четверти XXI пополнилась ее замечательными образцами. Среди них особое место занимают произведения Эдуарда Айрапетяна.



Президент Армении Серж Саргсян и Эдуард Айрапетян

Его смело можно назвать мастером композиции. Каждое новое сочинение, вышедшее из-под его пера, становится событием в мире армянской музыки. Его высоко чтят профессионалы и любят широкий слушатель. Реакция на его музыку говорит о том, что композитор угадывает и отражает в своих произведениях какие-то главные духовные запросы своих современников.

8

Շնորհավորում ենք ՄԵԴԵԱ ԱՐԱՋԱՄՅԱՆԻՆ ծննդյան առթիվ



Շնորհավորանքներ ԵՊԿ գիտական խորհրդում մարտի 8-ի առթիվ, որը նաև մեծ թավջութակահարու ծննդյան օրն է



ԵՊԿ ռեկտոր, պրոֆեսոր Շահեն Շահինյանի շնորհավորանքները Մեդեա Արախամյանին հորեկյանի և շնորհանդեսի առթիվ



Կոմպոզիտորների երախտիքը՝ Մարտին Վարդապետյան, Մեդեա Արախամյան, Ստեփան Շաքարյան, Մարտին Իսրաելյան, Ռեմիտոր՝ Կարեն Ծատուրյան



Հեռ խորհրդի որոշմամբ, նախագահ՝ Դավիթ Ղազարյանը Մեդեա Արախամյանին հանդիսավոր պայմաններում հանձնեց ընկերության 55-րդ թվով արձանագրված Կոմիտասի հուշամեդալը, Ա. Խաչատրյանի տուն թանգարան, 1.3.2018.

4

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ

Արվեստի անկումն այսօր ոչ միայն փաստ է, այլև բնական դարձած «երևույթ»: Իհարկե, այս ամենի մասին դեռ շատ «գրույցներ» կունենանք և կփորձենք միասին ուսումնասիրել թե ինչ երևույթ է դա և ինչպես անել դրա մասնիկը չդառնալու համար: Սակայն հիմա կխոսենք այդ երևույթի հերթական օրինակներից՝ 2018 թվականի մարտի 7-ին և 8-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում կայացել է հայ կոմպոզիտորական արվեստի 9-րդ փառատոնը՝ նվիրված կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանի 110-ամյակին: Նախքան բուն համերգին անդրադառնալն, այս «գրույցի» շրջանակում հիշենք երկու կարևոր հանգամանք՝ մենք չենք օգտագործելու «համեմատություն» հասկացողությունը և արվեստին անդրադառնալիս լինելու ենք անկեղծ, քանզի հակառակ դեպքում կմանկվենք իրականությունն աղավաղող գովաբանների:

Այսպիսով, այդ օրերին հնչեցին ինչպես հայաստանաբնակ, այնպես էլ սփյուռքահայ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

րը: Համերգներին նկատելի էր երաժիշտ կատարողների պատրաստվածությունը: Հարկ է ընդգծել նաև ելույթ ունեցողների բեմական ակնահաճո կեցվածքը, որը դրական ազդեցություն թողեց համերգասրահում գտնվողների վրա: Երբ մենք բարձրաձայնում ենք «արվեստ» բառը, կարևոր է նկատել նրա բոլոր կողմերն ու ենթաձուլերը, որպեսզի պատկերն լինի ամբողջական: Համերգին հնչած ստեղծագործություններից լավագույնը՝ Նուբար Ասլանյանի փայտա փողայինների քառյակի և դաշնամուրի համար «Սարերում» սյուիտն էր:

Նախորդ ութ տարիների ընթացքում անցկացվել են հետևյալ համերգաշարերը՝ Սարյան-Ֆեստ (2010 թ.), Բաբաջանյան-Ֆեստ (2011 թ.), Չուխաջյան-Ֆեստ (2012թ), Ռոմանոս Մելիքյան-Ֆեստ (2013 թ.), Տերտերյան-Ֆեստ (2014 թ.), Էդգար Հովհաննիսյան-Ֆեստ (2015 թ.) Միրզոյան-Ֆեստ (2016 թ.) և Հարո Ստեփանյան-Ֆեստ (2017 թ.):

2

✓ ՄԵԴԵԱ ԱՐԱՋԱՄՅԱՆԻ հորեկյանը և գրքի շնորհանդեսը Բյուրականում

3

✓ МОЛОДОЕ ПОКОЛЕНИЕ ПРЕДПОЧИТАЕТ СЛУЖЕНИЕ РОДИНЕ

6

✓ «ՄԵԾ ԱՐՎԵՍԸ ՄԻՇՏ ԷԼ ՆՈՐ Է...» Գրիգոր Եղիազարյանի ծննդյան 100-ամյակին. 2008թ.

7

✓ ԷԴՈՒԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՐՎԵՍԸ

8

✓ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՍԼԵՅ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ և ՉԱՅԿՈՎՍԿԻԻ ՀԱՄԱՆՈՒՆ ՆԱԽԵՐԳԱՆԸ

9

✓ МУЗЫКАНТ, ЭНЕРГЕТИК, МАТЕМАТИК

10

Շնորհավորում ենք կառնեց մայրության և գեղեցկության փրկի առթիվ

«ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՖԵՍՏ» ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1 Իսկ այս տարի այն նվիրված էր կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Գրիգոր Եղիազարյանի 110-ամյակին: Կոմպոզիտոր, մանկավարժ, երաժշտական հասարակական գործիչ Գրիգոր Եղիազարյանը հայ ժամանակակից կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրներից է: Եղիազարյանի, որպես ստեղծագործողի, ձևավորման առաջին շրջանն անցել է Մոսկվայի կոմսերվատորիային կից երաժշտական ուսումնարանի երաժշտության տեսության, իսկ հետո կոմպոզիցիայի դասարաններում:

Նրա ստեղծագործական կարևորագույն շրջաններից մեկը կապված է Մոսկվայի կոմսերվատորիայի հետ, երբ նա ուսանում էր Ն. Մյասկովսկու մասնագիտական դասարանում: 1935 թ. երիտասարդ կոմպոզիտորը Մոսկվայից տեղափոխվելով Գյումրի, սկսում է իր մանկավարժական գործունեությունը: 1938 թ. վերադառնալով Երևան, գրում է «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը, որը Հայրենական մեծ պատերազմի ժանր փորձությունների ժամանակաշրջանի արտացոլանքն էր: Այս ստեղծագործությունը, որը Եղիազարյանի առաջին մեծակտավ գործերից է, կարելի է ասել, դարձավ ազգային երաժշտության լրջագույն ձեռքբերումներից մեկը: «Հայաստան» սիմֆոնիկ պոեմին հաջորդում է հերթական մեծակտավ գործը՝ ջութակի Կոնցերտը: Եղիազարյանը ունի գրված նաև մի շարք դաշնամուրային ստեղծագործություններ՝ «Հուշեր», «Լեզներ», «Տոկկատ», Կվարտետներ՝ լարային, փողային գործիքների համար, «Հիշողություններ» դաշնամուրային պիեսների շարքը: Նրա ստեղծագործական ժառանգության մեջ աչքի են ընկնում Ռապսոդիա, Քնարական պատկեր, Խորեոգրաֆիկ պատկեր ստեղծագործությունները: Կոմպոզիտորի հերթական մեծակտավ և ճանաչուն ձեռք բերած ստեղծագործություններից են «Արևածագին» սիմֆոնիկ պատկերն ու «Սևան» բալետը, որոնք նա գրել է 1952-1960 թթ: Աշխատանքը «Հրազդան» սիմֆոնիայի ստեղծման վրա, որի հիմքում Հովհաննես Շիրազի «Հրազդան» պոեմն է, շարունակվեց մի քանի տարի: Այդ տարիներին Եղիազարյանը նաև տարված էր մի նոր բալետ գրելու գաղափարով և ծնվեց «Արա գեղեցիկը», որը ևս մեկ արժեքավոր ներդրում դարձավ ազգային բալետի զարգացման ճանապարհին:

Սնվելով ազգային ակունքներից Եղիազարյանը իր ստեղծագործություններում օգտագործել է նաև ժողովրդական մեղեդիներ՝ «Ամպել ա, տուն չի գալիս»՝ ջութակի Կոնցերտում, «Կալի երգը»՝ «Հայաստան» սիմֆոնիկ պոեմում: Եղիազարյանի ստեղծագործական ժառանգության մեջ նաև իրենց ուրույն տեղն են գրավում դրամատիկական թատերական ներկայացումների համար գրված գործերը՝ որոնցից են «Կարմիր գլխարկ», «Գոշ», «Կույր երաժիշտ», «Նազելի», «Խնդության սրինգ», «Պաղտասար աղբար» և այլն: Ստեղծագործական աշխատանքի հետ զուգընթաց Եղիազարյանը ծավալել է նաև մանկավարժական գործունեություն՝ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: Իսկ 1954-1960 թթ. ստանձնել է վերոհիշյալ հաստատության ղեկավարի պաշտոնը:

Լայնամասշտաբ երաժշտահասարակական գործունեություն ծավալած կոմպոզիտորին նվիրված այս փառատոնի շրջանակներում թվայնացվել են Գրիգոր Եղիազարյանի ամենահայտնի ստեղծագործություններից՝ «Հրազդան» սիմֆոնիան և «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը: Այս տարի փառատոնը ներառեց հինգ համերգային երեկո, որոնց ընթացքում Գրիգոր Եղիազարյանի ստեղծագործությունների հետ մեկտեղ հնչեցին մոտ 40 հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ: Մինչև անդրադառնալ փառատոնի բացման համերգային երեկո-



Վարդան Աճեմյան, Սերգեյ Սմբատյան, Սարգիս Բալբաբյան

յին նշեմ, որ եթե չլինեին այն կազմակերպությունները, անհատները ովքեր վերջին տասնամյակի ընթացքում հայ կոմպոզիտորական արվեստի կողքին են կանգնած, մասնավորապես հանրապետության նախագահն ուն հովանու ներքո է իրականացնում այս կարևորագույն մշակութային իրադարձությունը: Մշակույթի նախարարությունը, ուն աջակցությամբ է տեղի ունենում փառատոնը և հատկապես Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյանը, հնարավոր չէր լինի մեկտեղել և իրականացնել այնպիսի փառատոն ինչպիսին է հայ կոմպոզիտորական արվեստը: Սա մի մշակութային կարևորագույն միջոցառում է, որտեղ հնարավորություն ենք ունենում այն գլխավոր հերոսի անվան շուրջ, ում նվիրված է լինում ամենամյա փառատոնը, մեկտեղել հայ կոմպոզիտորական արվեստն, ընդ որում տարբեր սերունդների: Փառատոնի օրերից յուրաքանչյուրն ունեցավ որոշակի նվիրում, հատկապես կարելի է առանձնացնել երկրորդ օրվա՝ Մարտի 6-ի համերգը, որի ընթացքում հնչելու էր Գրիգոր Եղիազարյանի սաներից, հիմնականում ավագ սերունդը՝ ներկայացնող կոմպոզիտորների ստեղծագործությունները: Մարտի 5-ին Արամ Խաչատրյանի տուն թանգարանի համերգասրահում տեղի ունեցավ փառատոնի բացման երեկոն: Երեկոյին ներկա էին մի շարք անվանի կոմպոզիտորներ, երաժշտագետներ և բազմաթիվ երաժշտասերներ: Համերգը վարում էր երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, կոնսերվատորիայի դասախոս՝ Օլյա Նուրիջանյանը, համերգի սկզբում հանդես եկավ բացման խոսքով: Երեկոն բացվեց Գրիգոր Եղիազարյանի ջութակի Կոնցերտի կամերային կատարմամբ: Այս Կոնցերտը Եղիազարյանը գրել է ջութակի և նվագախմբի համար 1943 թ.: Այն առաջին անգամ հնչել է 1944 թ. և մենակատար էր Ավետ Գաբրիելյանը:

Համերգին հնչեց Կոնցերտի առաջին մասը, մենակատարն էր Գեորգի Գասպարյանը, ով Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի 1-ին կուրսի ուսանող է, իսկ նվագակցողն էր Հայաստանի Պետական սիմֆոնիկ նվագախմբի մենակատար՝ դաշնակահար Լիլիթ Զաքարյանը: Երեկոյի երկրորդ կատարումը երիտասարդ կոմպոզիտոր, Երևանի Կոմիտասի անվան Կոնսերվատորիայի մագիստրատուրայի ուսանող՝ Վահագն Վարդանյանի «Նավարություն» և «Սի-ցիլիանա» պիեսներն էին: Այս երկերը գրելու միտքը հեղինակի մոտ ծնվել է Կոնսերվատորիայի բակալավրական կրթության 1-ին կուրսի դասընթացներից մեկի ժամանակ և արդեն չորս անգամ հնչել է համերգային բեմերից: Ինչպես հեղինակն է առանձնակի նշում այն դրրիական լադում է: Գրված է ջութակի և դաշնամուրի համար: Սա դեռևս ջութակի համար գրված նրա միակ ստեղծագործությունն է: Այն կատարեցին Երևանի Կոմիտասի անվան Կոնսերվատորիայի 3-րդ կուրսի ուսանողուհի, ջութակահարուհի, Ալեքսանդր Կոսեմյանի մասնագիտական դասարանը ներկայացնող՝ Աննա Պետրոսյանը իսկ նվագակցողն էր հենց ստեղծագոր-



Օտրի տրիո. Ֆլեյտահար՝ Ռուզաննա Թովմասյան, ջութակահար՝ Անժելա Չովհաննիսյան, ալտահար՝ Արևիկ Կոսյան

ծության հեղինակ՝ Վահագն Վարդանյանը: Հաջորդ կոմպոզիտորն ուն ստեղծագործությունը կատարվեց, Սիմոն Չովհաննիսյանն էր: Հեղինակ ուն համար նախընտրելի է դասական ժանրերում ստեղծագործելը և հատկապես լարային կվարտետի ձևով ներկայանալը, դրա մասին են վկայում նրա 3 լարային Կվարտետները: Դրանցից մեկը՝ Ֆլեյտայի, ջութակի, ալտի և թավջութակի համար կոմպոզիտորը գրել է 2001 թ., կատարումը տեղի է ունեցել նույն տարում: Իսկ երեկոյի ժամանակ այն կատարեցին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբում ձևավորված, երեք անդամներից կազմված Օտրի տրիոյի աղջիկները՝ Ֆլեյտահար՝ Ռուզաննա Թովմասյանը, ջութակահար՝ Անժելա Չովհաննիսյանը, ալտահար՝ Արևիկ Կոսյանը և Օտրի տրիոյին այդ երեկո միացել էր թավջութակահար՝ Անուշ Յավրումյանը:

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի բացման երեկոյի ժամանակ չէր կարող չհնչել հայ կոմպոզիտորական արվեստի փայլուն ներկայացուցիչ Առնո Բաբաջանյանի երաժշտությունը: Երեկոյին կատարվեց նրա ջութակի և դաշնամուրի համար գրված Սոնատը (1960 թ.):

Այս կատարումը կարելի է համարել համերգի ամենագագանունքային և ապրումներով լի համարը, որն իրականացրեցին ջութակահարուհի Անժելա Յավրումյանը և դաշնակահարուհի Գայանե Ասլայանը:

Երեկոն եզրափակվեց կոմպոզիտոր՝ Գագիկ Չովունցի ստեղծագործությամբ: Գագիկ Չովունցը հեղինակ է սիմֆոնիկ, կամերային, գործիքային ստեղծագործությունների: Ունի գրված մի շարք Ինվենցիոն ցիկլեր՝ ինչպես նվագախմբի այնպես էլ դաշնամուրի և պղնձյա փողային գործիքների համար: Երեկոյի ավարտին հնչեց «Ինվենցիոն պիեսներ»ը գրված Ֆլեյտայի և դաշնամուրի համար: Կատարեցին Ֆելյտահար՝ Ռուզաննա Թովմասյանը և դաշնակահար՝ Գայանե Ասլայանը: Այս կատարումն ինքնատիպ կապ հանդիսացավ փառատոնի երկրորդ օրվա համերգային երեկոյի ծրագրի հետ, որը նվիրված էր լինելու Գրիգոր Եղիազարյանի կոմպոզիտորական դասարանը ներկայացնող սաների ստեղծագործություններին:

ԱՐՄԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ
երաժշտագետ,
ԵՊՀ 3-րդ կուրսի ուսանողուհի

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ

1 («Արևածագ», «Քամու խաղը», «Խորալ», «Գիժ առու», կատարողներ՝ Գևորգ Ավետիսյան (ֆլեյտա), Տիգրան Վարդանյան (հորոյ), Ավետիք Ղազարյան (կլառնետ), Նիկոլայ Պողոսյան (ֆագոտ), Լիլիթ Զաքարյան (դաշնամուր):



Նուբար Ասլանյան

Ծրագրային 4 մասից՝ «Արևածագը» և «Խորալն» արժանացան հանդիսատեսի բարձր գնահատականին: Քառյակի կատարողներից երաժշտականությամբ և մեղեդայնությամբ տարբերվեց Ֆլեյտահար Գևորգ Ավետիսյանը:

Մարտի 7-ին հնչած կատարումներից քննադատության ենթարկվեց Հարություն Դելլալյանի կլառնետի և դաշնամուրի համար Սոնատը՝ (կատարողներ՝ Ավետիք Ղազարյան (կլառնետ), Վահագն Վարդանյան (դաշնամուր): Կլառնետահար Ավետիք Ղազարյանի նվագաբաժինը մեղմացնում էր ստեղծագործության ընդհանուր բնույթն, սակայն սեկունդաներով և դիստանաներով լի դաշնամուրի նվագամասը վերջնականապես ջախջախեց ունկնդրին: Կարիք չկա շեշտելու ունկնդրի ծաղրանքը կամ արդարեցնելու ստեղծագործությունն ասելով, թե՛ սա այն փայլուն մոնուշներից է, որն ընկալվում է տարիներ հետո: Ո՛չ: Միայն կավելացնեմ, որ այս ստեղծագործությունը հաճելի կլինի ժամանակակից երաժշտություն սիրողներին, այսինքն նրանց, ովքեր մերժում են «մեղեդու» գաղափարը:

Բավականին հանդարտեցնող էր Ռիչարդ Յարդունյանի ծրագրային «Երեք պրելյուդ և պար» դաշնամուրի համար ստեղծագործությունը՝ «Քամի», «Ծով», «Երկինք», կատարողն էր՝ Արթուր Գրիգորյանը (դաշնամուր): Կարևոր է նշել, որ բոլոր մասերն էլ կատարվեցին ըստ բնույթի՝ հուզառատ

«Քամին» տեղափոխեց ունկնդրին դեպի ալիքոտ «Ծովը» և թողնելով մարդուն՝ «փոթորիկն» անդունդում, հաստատեց բնության գեղեցկությունը լուսավոր «Երկնքով»։ Կարծես փիլիսոփայական կոչ լինե՛ր՝ միայն դեպի առաջ, միայն դեպի վեր։ Դաշնակահար Արթուր Գրիգորյանը վարպետորեն փոխանցեց ստեղծագործության տրամադրությունն՝ արժանանալով հանդիսատեսի համակրանքին։

Բացարձակապես անհասկանալի էր Կոնստանտին Պետրոսյանի փայտա փողային Կվինտետի համար գրված ստեղծագործությունը, (Allegretto-Moderato-Allegretto; Vivo; Lento; Presto)։ Կատարողներ՝ Գևորգ Ավետիսյան (ֆլեյտա), Տիգրան Վարդանյան (հորոյ), Ավետիք Ղազարյան (կլառնետ), Նիկոլայ Պողոսյան (ֆագոտ), Արմեն Կարապյան (գալարափող), որն էլ եզրափակեց մարտի 7-ի համերգը։ Իհարկե, երաժշտության պատմության մեջ շատ «անավարտ» ստեղծագործություններ կան, սակայն այս ստեղծագործության «ավարտը» չհասկացավ զրեթե ոչ ոք։ Սա նույնպես այն գործերից է, որը համակրանքի կարծանանա ժամանակակից երաժշտություն սիրողների մոտ։

Հաջորդ օրը՝ մարտի 8-ին առաջինը հնչել է Վարդան Աճեմյանի լարային Կվարտետը՝ նվիրված Ղազարոս Սարյանի հիշատակին (Largo - Piu mosso – Moderato - Meno mosso)։

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ

Այս ստեղծագործությունից հետո հիշեցին հայտնի ասացվածքը՝ «լավ է լռել քան ասել վատը»: Հիշելով մեր կարևոր պայմաններից մեկը՝ չհամեմատելն սխալ կլիներ ամմիջապես անդրադարձալ հաջորդ համարին, սակայն այս պարագայում թույլ կտամ ինձ նման խախտում կատարել, ասելով, որ այդ գործից հետո հրաշալի հնչեց Մարտին Վարդապարյանի թիվ 3 լարային Կվարտետը (Prelude, Scherzo, Interlude, Finale): Համեմատությունից զատ ընդունելով ստեղծագործությունը, կնշելի Prelude և Finale, որոնց խիտ, վերընթաց լի ֆակտուրան արթնացրեց հանդիսատեսին: Նման արծագանքը մեծ ալիք բարձրացրեց դահլիճում, ինչից հետո կատակով ասված՝ «Սկզբում գործը հետո հաճույքը» հեղինակի խոսքերը հանդարտեցրին ունկնդրին:

Թեպետ, այդ երկու օրերի ընթացքում հնչած միակ բովանդակությամբ և մեղեդայնությամբ լի՝ Մարտին Ուլիխանյանի թիվ 3 լարային Կվարտետի համար գրված «7 մահացու մեղքեր» ստեղծագործությունն էր («Հպարտություն», «Ազատություն», «Ծուլություն», «Ողջախոհություն», «Որկրամոլություն», «Նախանձ», «Բարկություն»): Կարևոր եմ համարում մեր օրերում անդրադառնալը նման թեմային, քանզի հավերժական է այն, ինչ Աստուծոց է տրված և, մոռացության տրվելու հետևանքով, ժամանակ առ ժամանակ կարելի է երաժշտության միջոցով հիշեցնել մարդկությանը գլխավորի մասին: Ստեղծագործության ամեն «մեղքին» բնորոշ կոմպոզիտորը տվել էր համապատասխան արտահայտչամիջոցներ՝ փոփոխվող ռիթմիկան, վառ հակադրությունը մասերի միջև և բացարձակապես տարբեր ֆակտուրան: Առհասարակ, նկատելի էր հեղինակի պրոֆեսիոնալիզմը և այն, ինչը չնկատվեց մնացած կոմպոզիտորների ստեղծագործություններում՝ մեղեդայնությունը,

այսինքն այն, ինչ ժամանակակից երաժշտությանը բնորոշ է:

Համերգային ծրագրի վերջում հնչեց Ստեփան Լուսիկյանի լարային Կվարտետը (Էրիկ Մանուկյան՝ առաջին ջութակ, Անի Ադիկյան՝ երկրորդ ջութակ, Ելենա Հայրապետյան՝ ալտ, Դավիթ Պիչիկյան՝ թավջութակ): Հետաքրքիր էր հետևել երաժիշտ կատարողների զգացմունք արտահայտելու փորձին, որն ի վերջո բերեց իրենց իսկ ուժերի սպառմանը: Սա նույնպես մեր «զրույցի» բացառությունն է, քանզի սկզբում նշված ելույթ ունեցողների պատրաստվածությունն այս դեպքում իր տեղը զիջեց հոգնածությանը: Դահլիճում գտնվող մարդիկ հարց էին տալիս՝ «ինչպե՞ս արտահայտել այն ինչ չկա» և պատասխանն այդպես էլ չգտան:

Հոգևոր և մտավոր արժեքների կորուստն, ավելի ճիշտ՝ հրաժարումն դրանցից, մեր իրականության մեջ, ցավոք, ակնհայտ է: Այս, ինչպես և սկզբում նշված խնդիրներին կանոնադառնալը մեր հետագա «զրույցներում», իսկ այժմ, վերադառնալով համերգի ավարտին, ավելացնեմ, որ մենք նպատակ չունենք կոպիտ արտահայտվելու կամ չափազանցելու, այլ՝ խոսելու ճշմարիտ և իրերն անվանելու իրենց անուններով: Այսպիսով, այն ինչ ասվեց, վերաբերում էր մարտի 7-ի և 8-ի փառատոնի շրջանակներում անցկացվող համերգներին: Ինչպես գիտեմք, մեկ գործով ոչինչ չի որոշվում, այնպես որ շարունակենք հետևել հայ կոմպոզիտորների ստեղծագործական աշխատանքին և բացահայտենք երաժշտության աշխարհի գեղեցիկ նմուշներ:

ԼԻԱՆԱ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ
երաժշտագետ,
ԵՊԿ 3-րդ կուրսի
ուսանողուհի

Արծագանքում ենք սույն հողվածին

Ցանկանում ենք նշել, որ ժամանակակից գործերը պետք է գեղարվեստական արժեքին համապատասխան մատուցվեն կատարողականության արվեստին պատշաճ: Քանի որ բազմակի անգամ Հայրություն Դելլալյանի երկը հայ ունկնդիրը և ոչ միայն հայ, այլ Եվրոպայի բազմաթիվ բեմերից լսել է փայլուն կատարումներով: Այն նվիրված է առաջին կատարողին: «Մեղիտացիա-տոնատը» գրված 1982 թ. երջանկահիշատակ, ԵՊԿ պրոֆեսոր, ամբիոն վարիչ և միջազգային մրցույթների դափնեկիր Արզար Մուրադյանին (դաշնամուրի նվագաբաժինը՝ կոմպոզիտորն է հնչեցրել) և ժորժ Տրինդատը:

Ուրեմն խնդրներ կան, որ շատ կարևոր է ժամանակակից արվեստի լուսաբանման համար: Նման փաստ է արծանագրվել նաև Վարդան Աճեմյանի բազմակի անգամներ հնչած լարային Կվարտետի վերաբերյալ նվիրված Ղ. Սարյանին, որն իր կատարման պատմությունն ունի, որպես սարյանական ռժանմատոցության նվիրում և հաջողված գործերից մեկը: Ուստի սկսենք երաժշտագետն իր գնահատման կամ ավելի ճիշտ քննադատման խոսքում, պետք է նաև ուսումնասիրի տվյալ գործը, երբ այն նման եզրահանգումների է բերել իրեն կամ ունկնդրման արդյունքում պատճառները նույնպես ընկալվեն ու մեկնաբանվեն: Հետաքրքիր է քանի փորձեր են կատարել կամ կոմպոզիտորի տվյալ դեպքում Վ. Աճեմյանի ներկայությունը կամ խորհուրդները եղել են: Եվ որ տարբեր երաժիշտներ կարող են տարակարծություն հայտնել, այն էլ բնեռային: Չէ՞ որ խոսքը ժամանակակից արվեստի մասին է, այն էլ ժամանակի փորձությունը վաղուց անցած գործերի:

Հ.Գ.- Ողջունում եմ, գրիչ ունեցող երաժշտագետ-ուսանողին և առաջարկում առավել ուսումնասիրել մեկնաբանումները կամ ստեղծագործությունների անցած ճանապարհը, որպեսզի ասելիքը համոզիչ լինի: Էլ չասենք, որը մտորելու տեղիք է տալիս երաժշտաքննադատությունը, օրինակ՝ Գերմանիայում ընդունում են համերգներից գրախոսականները քննադական հողվածները կամ միայն 40-ամց երաժշտագետների կողմից:

ԳՐԴԱՐ ԵԱԳՈՅԱՆ
երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր,
թողարկման պատասխանատու

ՄԵԴԵԱ ԱՐՐԱՀԱՄՅԱՆԻ հորելյանը և գրքի շնորհանդեսը Բյուրակյանում



Երգչուհիներ՝ Ջուլիետտա Ալեքսանյանը, Լուսինե Մակարյանը Մեդեա Արրահամյանի հետ, շնորհանդեսը վարեց երաժշտագետ, Օլյա Նուրիջանյանը

Բյուրակյանի Արվեստի ակադեմիայում տեղի ունեցավ Հայաստանի ժողովրդական արտիստ, կատարողական արվեստի քայլող դասական Մեդեա Արրահամյանի 85-ամյակին նվիրված հորելյանական հանդիսությունը, նաև հեղինակ լրագրող, բանասեր-թրքագետ Սերգեյ Մանվելյանի կազմած «Մեդեա Արրահամյան» պատկերազարդ գրքի շնորհանդեսը:

Այն կազմակերպել էր մեր հանրությանը հայտնի հիմնալի փառատոնի և համերգների կազմակերպիչ, կոմպոզիտոր Ստեփան Ռոստոմյանը:

Մեծացել են մեր մեծերը յուրաքանչյուրին ժամանակին է ամիրաժեշտ հարգանքի ու գնահատանքի արժանացնել: Այսօր նոսրացել են նրանց շարքերը: Կարոտագին տողեր միշտ էլ կնվիրենք բազմադարյա մեր մշակույթի ականավոր գործիչներին, իսկ ողջերին արժանին մատուցենք:

Այսպես էլ շնորհանդեսներով երաժշտական մասնագիտական հանրությունը մեծարում է Մեդեա Արրահամյանին:

Հաշվի առնելով, որ գրքի հեղինակը երաժիշտ չէ և կարող են ոմանք ինչ-ինչ թերություններ գտնեն և չհավանեն, ոմանք հավա-

նել են մտահոգացումը, պատկերազարդ գիրքը: Սակայն գրասեղանին արդեն այն դրված է:

Մենք երաժիշտներս, այնքան սիրով ենք շրջապատել Մեդեա Արրահամյանին միշտ և բոլոր ժամանակներում, որ տողերիս հեղինակը, պրոֆեսոր, ՀԵԸ նախագահ Դավիթ Ղազարյանը, Ստեփան Ռոստոմյանը երևի էլի անհատ գործիչներ ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն ընդգրկվել իրենց սրտի խոսքով մեծանուն և վաստակաշատ արտիստուհուն նվիրված գրքում, սակայն սիրով և՛ կազմակերպել և՛ մասնակցել ենք և հաղորդակցվել մեր արվեստով մեծարում ենք Մեդեա Արրահամյանին: Կարծում եմ այդ հեղինակի թերացումը նրա անփորձության կամ էլ երաժշտական արվեստի ոլորտից չլինելու պատճառն է: Ինչևէ կարևորն աշխատանք է կատարվել և ինչ որ ստեղծվել է գովեստի արժանի է:

Բյուրակյանում շնորհանդեսին ներկա էին երևելի մտավորականներ, կոմպոզիտորներ՝ Աշոտ Ջոհրաբյանը, Էդուարդ Հայրապետյանը, Վաղարշակ Ջաքարյանը, խմբավարներ՝ Կարեն Լավչյանը, Հարություն Թովիկյանը, երաժշտագետ Արմենուհի Մարտիրոսյանը: Համերգային բաժնի մասնակիցների թվում էին մեներգիչներ Ջուլիետտա Ալեքսանյանը, Լուսինե Մակարյանը, թավջութակահար՝ Անդրանիկ Աղաջանյանը, նվագակցում էին դաշնակահարներ՝ Լևոն Ջավադյանը, Մարիաննա Հայրապետյանը: Շնորհանդեսը բացվեց «Հովեր» պետական կամերային երգչախմբի (գեղ. դեկ. և գլխ. դիրժոր՝ Սոնա Հովհաննիսյան) ելույթով:

խմբագրական



Լարային ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Բագրատ Մուրեմի Վարդանյան, գրքի դիզայներ՝ Վահան Քոչար



Դիանա Աղամյան



Արվեստի ակադեմիա, Բյուրակյան, 2017 թ.



Ստեփան Ռոստոմյան, Մեդեա Արրահամյան



Սոնա Հովհաննիսյան, Մեդեա Արրահամյան, գրքի հեղինակ՝ Սերգեյ Մանվելյան

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՄԵԴԵԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԺՆՆՈՂՅԱՆ ԽԱՐԵՂԱՐԺՐ

Հանդիսությունը՝ Արամ Խաչատրյանի տուն թանգարանում



Մեղեա Աբրահամյանի գրքի շնորհանդեսն Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում
Պահքի շրջանն էր հայկական ազգային ուստեստներով ողջունեց արտիստուհուն և ներկաներին Հանրապետության գլխավոր խոհարար ազգային կերակրատեսակների վարպետ, իր գործի գիտակ՝ Սեդրակ Մամուլյանը։ Նրա հետ երկարամյա է «ԵՊԿ հրատարակչության» և հիմնադիր Գոհար Շազոյանի բարեկամությունն ստեղծագործական եզրույթում հատկապես վառ հանդիպումներից հիշենք նաև «Տերտերյանի ժամանակը» փառատունը «ԵՊԿ հրատարակչության 2017 թվականի շնորհանդեսը և սույն օրն էլ՝ Մեղեա Աբրահամյանի հոբելյանական հանդիսությունը»



Մեներգեցողության 2-րդ ամբիոնի վարիչ, մեներգչուհի միջազգային մրցույթների դափնեկիր և հանձնախմբի անդամ Գայանե Գեղամյան

պես համընդհանուր սերը և հարգանքը թևածում էր ամբողջ ընթացքում (լուսանկարներում բացահայտ դա երևում է)։ Այնքան մեծ էր ակնածանքը մեծ հայուհու նկատմամբ, որ երբ տողերիս հեղինակն իր նախածեռնության մասին ասաց հանրությանը քաջատեղյակ հայրենասեր մեծատառով հայ մարդու Սեդրակ Մամուլյանին, ում հետ ստեղծագործական բարեկամություն է հաստատված այս էլ 10 տարուց ավելի «ԵՊԿ հրատարակչության» աշխատակազմի ու մեր միջոցով նաև «Ակունքի բարեկամ» շատ պրոֆեսորների հետ։ Նա իր ողջույնը բերեց անվանի պրոֆեսորին ու հիացրեց բոլորիս իր ավանդական ծիրանի և սալորի հայկական չիր-կոնֆետներով, որոնք պահքի շրջանում մեր սեղանների զարդն են եղել։ Շամպայնի ու շոկոլադի հետ բոլորն սիրով համտեսում էին աննախադեպ ձևով ամբողջ համերգ-հանդիպման ընթացքում ևս։ Տիրում էր ուրախ, բարեկիրթ, հուժկու ջերմ խոսքով և երաժշտությամբ լեցուն մթնոլորտ։ Նկարահանվում էր վավերագրական ֆիլմ ԵՊԿ վաստակաշատ պրոֆեսոր Աննա Բարսամյանի ծոռան, ռեժիսոր Կարեն Ծատուրյանի կողմից, որին ներկա էին և նրա դուստրը Անահիտ Բարսամյանը և թոռնիկը Կարինե Սվատեցկայան։ Աննախադեպ էր նաև Անահիտ Մամուլյանի գրաֆիկական նկարների ցուցահանդեսը «Ծաղկազարդ» վերտառությամբ բոլորը հիացած էին, քանի որ մեր բարեկիրթ, համեստ ու պատրաստական գործընկերոջ տաղանդի հետ էինք առնչվում նաև։



Նկարչուհի, ԵՊԿ ռեկտորի քարտուղար՝ Անահիտ Մամուլյան, մանրանկարչուհի Կարինե Սվատեցկայա, կոմպոզիտորներ՝ Ստեփան Շաքարյան, Նարինե Զարիֆյան

Ա ն ա հ ի տ Ս ա մ ս ո ն յ ա ն ի գ ա Ր Ն ա ն ա յ ի ն
ն կ ա Ր Ն ե Ր ի ց ու ց ա հ ա ն դ ե ս ը



Դաշնակահարուհի, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն, միջազգային մրցույթների դափնեկիր՝ Արմինե Գրիգորյանը ողջունում է ջավջութակի աշխարհահռչակ վարպետ Մեղեա Աբրահամյանի հոբելյանը, ինչպես նաև նախածեռնության հեղինակ Գոհար Շազոյանին, Շնորհանդեսը, նվիրված Մեղեա Աբրահամյանի պատկերազարդ ալբոմ գրքին հեղինակ Ս. Մանվելյանին



Էդուարդ Հայրապետյան, Սուրեն Զաքարյան, Արզաս Ոսկանյան, Վարվարա Դովհաննիսյան, Դավիթ Ղազարյան, Լևոն Իգիթյան



Լեոնականի քաղաքապետ՝ Դոնարա Դարությունյան



Կոմպոզիտորների միության նախագահ՝ Արամ Ասթյան



Մարգարիտա Ռուսկյանի շնորհավորանքը Մեղեա Աբրահամյանին

Ռեկտորի և ռեկտորի երկարաշունչ Լեոնականի քաղաքապետի նախագահ Դոնարա Դարությունյանի խոսքը, որի հիշողություններն այնքան շատ էին ու ջերմ, որ կարող էինք մեկ երեկո նվիրվել նրա հուշերին Ս. Աբրահամյանի մասին։ Ձերմ ու հակիրճ էին ՀՀ ժողովրդական արտիստ դիրիժոր Յուրի Դավթյանի իր ժամանակակցի ու հասակակցի մասին ուրախ և մյուսներին հուզմունք պատճառող խոսքը։ Ելույթ ունեցողների կարծիքները բոլորը և նրանց ուժերը ներկա էին, ընթերցողը կարող է կարդալ Գեղեցիկ պատկերներով զարդարված գրքում և հուշերում և նրա գործունեության մասին ամփոփ պատկերացումը։ Սիրով և բովանդակալից էր վաղեմի գործընկեր արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուսկյանի խոսքը։ Վերլուծական հոդվածներ կարող եք կարդալ Մեղեա Աբրահամյանի հոբելյանին նվիրված «Երաժշտական Հայաստան» 2 (25) 2007 թ. ամսագրում։



Մեղեա Աբրահամյանի ծննդյան շնորհավորանքները Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում, միջազգային մրցույթների դափնեկիր մեներգչուհի՝ Արմինե Վարդանյան



Մարտին Վարդազարյան



Կոմպոզիտորներ՝ Մարտուն Իսրաելյան, Էդուարդ Գարայան

Անվանի քաղաքացի ճարտարապետ Լևոն Իգիրթյանը շատ հուզիչ վերապրումներ ունեցավ իր մանկության տարիների հուշերից և երաժշտության նկատմամբ ու լարային գործիքների հանդեպ ունեցած ակնածանքից ու սիրուց։ Մշտապես ջերմ էր ու մասնագիտական առումով կարևոր ԵՊԿ ամբիոնների վարիչներ Իրինա Զոլոտովայի, Գայանե Գեղամյանի ու նաև սիրով լցված ԵՊԿ ռեկտոր Շահեն Հակոբի Շահինյանի խոսքը, ով մեծարում և խոնարհվում է սիրելի ու անմիջական պրոֆեսոր Մ. Աբրահամյանի առջև։ Հունորով և աշխույժ հուշերով էր Մարտին Վարդազարյանի ելույթը։ Բացման և ողջունիս խոսքում բացարձակ նշեցի Մ. Աբրահամյանի այն մեծագույն նպաստը, որ նա ունեցավ հայ կոմպոզիտորների նորանոր ստեղծագործությունների կատարումներով։ Նրա արվեստով ոգևորված շատ կոմպոզիտորներ անդրադարձան և ստեղծեցին խոշոր ու փոքր կտավի 130-ից ավելի երկեր ու հանդիպմանը ներկա էին այնքան շատ կոմպոզիտորներ, որ ոչ մի համերգի չես հանդիպի բոլորին միասին։ Հայ կոմպոզիտորները հիացմունքի ու ոգեշնչված խոսքեր էին հղում նաև ի դեմս ՀԿՄ նախագահ Արամ Սաթյանի։ Անակնկալ էր նաև ՀԵԸ նախագահ Դավիթ Ղազարյանի պարզևատուրում 55-րդ Կոմիտասի հուշամեդալով միակ պարգևով, որ ունի նրա ղեկավարած այդ 60-ամյա կառույցը, որը միակ կատարողական արվեստը միավորող օղակն է հանրապետությունում եղել և կա գործում է նրա ջանքերի շնորհիվ։ Համերգային ելույթներում հիացրեցին դաշնակահարուհի, Կոմիտասի անվան թանգարան-փնտիտուտի փոխտնօրեն Մարինա Գևորգյանի ելույթն Առնո Բաբաջանյանի «Էլեգիայի» կատարմամբ։ Մ. Աբրահամյանը վերջերս հաճախ էր հիշում իր հարազատ ու հունորով լեցուն ընկերոջն Առնո Բաբաջանյանի խոսքերը։ Հյուրախաղերին գալիս էր առավոտյան սենյակի դուռը թակում ու ասում. «Մեղեա, մի հատ նվագի լացեմ, գնամ»։ - խոսքը իր գործի մասին էր։



Գոռ և Գեորգի Ղասաբյանների ելույթ-ողջույնը Մեղեա Աբրահամյանին



Իրինա Զոլոտովա



Պրոֆեսոր, միջազգային մրցույթների դափնեկիր Անահիտ Ներսիսյան

Հիացրեցին ներկաներին ՀՀ վաստակավոր արտիստ, Բախի միջազգային մրցույթի դափնեկիր Անահիտ Ներսիսյանը Արամ Խաչատրյանի Պոեմի կատարմամբ, քանի որ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում էինք գտնվում նա նախընտրեց Մեծ կոմպոզիտորի երկը հնչեցնել ու «Բացակա չդնելու» նրա ներկայով պատվելու Մ. Աբրահամյանի ծննդյան հանդիսությանը։ Մեծանուն թավջութակահարուհին հիշողությունների գրկում էր երբեմն գտնվում, երբեմն հուզվում իրեն ողջունողների հետ, բայց ուշիմ, ժամանակակից, միշտ ապրում երաժշտությամբ։ Անահիտ Ներսիսյանը Բյուրականի շնորհանդեսին հյուրախաղերում էր արտերկրում և այնքան ուրախացավ, որ իմացավ նախածեռնվելու էր այս հանդիպումը։ Նա մեզ ոգևորողներից էր, որ ասաց. «Անպայման կգամ ու լավ գործ կնմանամ ու կնվագեմ»։ Այսպես մենք հավաքվեցինք ու նշեցինք հյուրընկալ ու սիրելի հարկի ներքո ու շրջանաձև նստելով, Ոսկե շամպայնով շնորհավորեցինք սիրելի արտիստուհուն։ Այնքան ջերմ էր Սոֆիկ Սարյանի խոսքն, այնքան հուզիչ կարծես մեզ հետ էին մեր սիրելիներն Արաքսի և Ղազարոս Մարյանները։



Յուրի Դավթյան, Գոհար Շադոյան, Մեղեա Աբրահամյան



Մարգարիտա Սարգսյան և ԵՊԿ դասախոս ու մոտ հեռանկարում արժանանալու է դոցենտի գիտական կոչման, մեներգչուհի՝ Աննա Պողոսյան

Հայր և որդի Ղասաբյանների՝ Գոռի (սաքսոֆոն) և դաշնակահար, կոմպոզիտոր Գեորգիի ելույթը Պյացոլայի Տանգոյով, որ հանդիպումից հետո երկար ժամանակ նրանց ելույթի մասին խոսում էին երաժիշտները հիացմունքներն թաքցնելով։ Մարտի մեկի հանդիպմանը և մեծարմանը հաջորդեց նաև ԵՊԿ գիտական խորհրդում ԵՊԿ ռեկտորի գնահատումը թե միջոցառման անմիջական ու լավ կազմակերպված լինելու փաստի արժանագրմամբ և թե կրկին հրավիրելով և շնորհավորելով մեծ թավջութակահարին։ Մենք երաժիշտներով հավաքվեցինք ու ուրախ, խորհրդանշական ավանդական պահի շրջանակներում՝ հացիկ ու բանիկ մեծարեցինք մեր կարողություններով։ Սրտի խոսքով Արգաս Ոսկանյանը իր գեղեցիկ ծայնով և կոմիտասյան երգի ավանդույթներով կատարեց ու ծնրադրելով որպես ջենտլմեն համբուրեց՝ շնորհաշատ, հայրենի կոմպոզիտորական արվեստը իր ողջ կյանքում մեծարող, հայուհու ծեռքը։



Սոֆիկ Սարյան



Մ. Աբրահամյանի ընկերուհին տ. Արսինե Կանադայից

Մեծարենք մեր մեծերին հավուր պատշաճի, ինչպես որ նրանք արժանի են, կարծում ենք ՀՀ մշակույթի նախարարությունը որևէ մեկ համերգ կնվիրի տաղանդավոր և ջալջութակի աշխարհաշակ մասետոր Մեղեա Աբրահամյանի արվեստին։ Անհամբեր սպասում ենք նման մեծարման։ Հիացրեցին նաև միջին ու երիտասարդ սերնդի մեներգիչները միջազգային մրցույթների դափնեկիրները՝ Աննա Պողոսյանը, որը նույնպես մոտակա գիտական խորհրդում դոցենտի կոչման ներկայացվեց, որի համար շնորհավորում ենք։ Կոմպոզիտորներ, դաշնակահարուհի Մարգարիտ Սարգսյանը իր կատարումներով և ջերմ խոսքով հիացնում է մշտապես և նաև իր պրոֆեսիոնալիզմով։

Հանդիսությունը կազմակերպել էր և վարեց ու նաև իրականացրեց «Երաժշտական Հայաստան» ամսագրի շնորհանդեսը նվիրված Մեղեա Աբրահամյանի գործունեությանն ու հոբելյանին ու թղթին հանձնեց հիմնադիր-գլխավոր խմբագիր, երաժշտագետ՝ ԳՐՀՐ ԵԱԳՈՅԱՆԸ



Դաշնակահարուհի Մարինա Գևորգյանի ելույթը

МОЛОДОЕ ПОКОЛЕНИЕ ПРЕДПОЧИТАЕТ СЛУЖЕНИЕ РОДИНЕ

Наверно, не будет новостью, что наше молодое поколение восхищается своей образованностью, принципиальностью и похвальной целеустремленностью! Талантов тоже им не занимать!

Все сферы заинтересованности молодежи могут этим похвастать! Не обделено талантливым новым поколением и искусство – выделю, к примеру, наш Оперный театр, о яркой молодежи которого свидетельствует как наш строгий армянский зритель, так и гости страны, а также именитые судьи за пределами Республики, и привезенные в театр награды!

Обновленный состав артистов миманса, также отличается грамотностью, музыкальностью и ответственностью!

В беседе один из артистов миманса, молодой талантливый выпускник ЕГК, участник уже многочисленных концертов и дипломант конкурсов, баритон Андраник Малхасян рассказал о своем выборе профессии и дальнейшего пути!



Бабаджания (отделение хорового дирижирования, класс Нуне Мелик-сетян) и в 2011–м поступил в Ереванскую гос. консерваторию им. Комитаса, на отделение академического вокала, окончил класс Заслуженного артиста РА, профессора ЕГК, ныне покойного Валерия Арутюняна...

Хочу подчеркнуть, что все 6 лет обучения в консерватории (бакалавриат и магистратура) со мной была, профессор ЕГК, концертмейстер Маргарит Саргсян, и по сегодняш-

ний день с ее помощью я принимаю участие в разных конкурсах и концертах, я очень благодарен ей за поддержку!

Расскажи, пожалуйста, о приобретенном и приобретаемом опыте в профессии...

В 2006–2007 пел в хоре Ереванской Церкви Св. Григория Просветителя, после с 2013 по 2016 был солистом в мужском хоре Абовянской Церкви Св. Иоанна (дирижер Ваге Бегоян). С 2016 по сегодняшний день пою в хоре Апаранской Церкви Св. Креста (дирижер Ерванд Франгулян) и с 2013 года служу в Национальном Академическом театре оперы и балета им. Спендиаряна в составе артистов миманса, приобретая еще большую профессиональную сценическую практику.

С 2014 года начался период участия в конкурсах: в составе хорового коллектива “Хазер” (дирижер Ани Навасардян) принял участие в ежегодном фестивале молодых музыкантов в г. Байройте в Германии, участвовал в “Нава-сардовских игрищах”, заняв Второе место в номинации академического пения, удостоился Второй Премии на Республиканском конкурсе имени Гоар Гаспарян и за высокое исполнительское искусство был награжден Президентской молодежной наградой в номинации “Вокал”, удостоился главной награды и диплома от “Международной ассоциации Искусства”... С 2014 года по сей день сотрудничаю с Домом–музеем А. Спендиаряна как исполнитель романсов композитора... В 2015 году принял участие в “Тертерян-фесте”... В том же году в Лондонском театре Бенджамина Бриттена в постановке “Давид Бек” А. Тиграняна исполнил партию Католикоса... В 2016–м принял участие в Ежегодном Фестивале–концерте, посвященном армянской церковной музыке, организованном Лондонской Церковью Св. Египсе...

В том же году участвовал в юбилейных мероприятиях, посвященных 135–летию Никола Галандеряна, а также исполнил свою первую главную партию – образ самого Григория Просветителя в опере “Просветитель”, написанной композитором Ронем Ганаи и поставленной певицей и режиссером Андреай Мелис, в рамках празднества 25 летия установления дипломатической связи между Арменией и Австрией, а также Арменией и Канадой..., принял участие в Международном фестивале им. Арама Хачатуряна! А недавно побывал на гастролях в Германии и Голландии с Тигра-



Андраник Малхасян

ном Амасяном и Ереванским гос. Камерным хором (рад сотрудничеству с ними)!

Что ты можешь сказать, оценивая увиденные тобою страны и людей?

Скажу, что армяне во всем мире отличаются особым вокальным тембром – я связываю эту особенность с нашей природой!

А от имени молодого поколения какие выделишь возможности и преграды?

Сегодня мы живем в свободном, технически развитом временном отрезке, когда нет недостатка информации и легко можно получить необходимые сведения о проводимых и планируемых за границей фестивалях. Посредством интернета и социальных сетей можно с легкостью поддерживать связь с организаторами, отправить заявку и получить приглашение, в самые короткие сроки, но... Все упирается в финансы. Самое сложное отыскать возможность оплатить свой переезд, жилье и, конечно же, музыкальное сопровождение – концертмейстера! Думаю, что на сегодняшний день – это основная преграда у молодого поколения, которое имея отличные данные и превосходную преподавательскую школу, не имеют возможности достойно представить свою страну за ее пределами! А в самой республике тоже все сводится к наличию одного единственного Оперного театра и сосредоточенностью на нем! Нет аналогичных малых театров и возможности музыкальных “мини – спектаклей”, дающих возможность большinstву принять участие и реализовать себя в профессии...

Что планируешь в ближайшее время, если не секрет?

С заграницей у меня много планов, но переезжать куда-либо навсегда не собираюсь! Я родился и вырос в Армении, 17 лет обучался здесь и благодарен Судьбе за своих преподавателей! Хочу приобретенные знания и свои возможности использовать на родине, в родном Театре (скажу без пафоса) – служба во благо родного мне народа!

ВИКТОРИЯ АЛЕКСАНОВНА ПОШОТЯН
режиссер музыкального театра

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԳԻՏԱԿԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՉՈՒՄԸ



Գայանե Հարությունյան, Էդուարդ Թադևոսյանի ողջույնը նվազախմբային դեկամատի պրոֆեսորին, Դավիթ Ղազարյան, Աննա Հովհաննիսյան

Շուշանիկ Մեհրաբյան, Ռուբեն Սմբատյան, Արսեն Ղազարյանը նվիրում է Սայաթ-Նովայի ընթերցումը պրոֆեսորին, Մեղեա Աբրահամյան

լուսանկարները Գ. Շադոյանի



Գայանե Հարությունյան, Լարային ամբիոնի վարիչ՝ Բագրատ Սուրենի վարդանյան, ԵՊԿ գիտական խորհրդում

Տավադարուհի Գայանե Հարությունյանը պրոֆեսորի պաշտոնակատար է եղել երկար տարիներ, երբ դեռ ՀՀ ԲՈՅ-ը ձևավորված չէր և նա այդ պաշտոնը զբաղեցնում էր ԵՊԿ-ում 2000-ից: Միայն 2018 թ. մայիսի 10-ին ստացավ պրոֆեսորի գիտական կոչումը, այն հաստատված է ՀՀ ԲՈՅ-ով: Պարզապես նա իր աշխատանքային գործունեության ամենօրյա ընթացքով ջերմությամբ է շրջապատել իր ուսնողներին Կոմիտասի անվան կոնսերվատորիայում և աշակերտներին Սայաթ-Նովայի անվ. երաժշտական դպրոցում: Առանձնահատուկ պետք է նշել նրա կարող գիտական մեթոդական միտքը և առաջին հերթին այն բարձր կրթությունը, որ ստացել է, ակադավոր դիրիժոր և լուսապայծառ ԵՊԿ ռեկտոր Կ. Ս. Սարաջևի, դստեր՝ Կիոա Սարաջևայի՝ դասարանի ասպիրանտուրայում՝ Մոսկվայում սովորելով, իր ամբողջ ներուժն ու արվեստը փոխանցում է իր սաներին:

ԳՐԱՐ ՇԱԳՈՅԱՆ



Անահիտ Սամսոնյան, Շուշանիկ Մեհրաբյան, Վարդգես Շանյան, Վաղարշակ Հարությունյան



Մեղեա Աբրահամյան, Նարինե Ավետիսյան, Գայանե Հարությունյան, Դավիթ Ղազարյան

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Ն Ք

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ ԳՐՈՇԸՆԿԵՐՆԵՐԸ, «Երաժիշտ» ամսաթերթի և «ԵՊԿ հրատարակչության» ամբողջ աշխատակազմը ԲՈՅ-ի հաստատումով ՊՐՈՖԵՍՈՐԻ պատվավոր գիտական կոչմանը արժանանալու համար

«ՄԵԾ ԱՐՎԵՍՏԸ ՄԻՇՏ ԷԼ ՆՈՐ Է...»

Մարգարիտ Ռուխկյան, երաժշտագետ.

- *Դուք, որպես ստեղծագործական հետաքրքիր ճանապարհ անցած, սովետական երաժշտության զարգացման բարդ, երբեմն՝ Չակասական փուլեր ապրած արվեստագետ, ի՞նչ կասեիք արդի երաժշտության մասին: Ձեր կարծիքով, կա՞ արդյոք սահմանազատում «արդիական» և «նոր» հասկացությունների միջև:*

Գրիգոր Եղիազարյան, կոմպոզիտոր.

- Նորն ստեղծագործական վառ աճիատականության աշխատանքի արգասիք է: Նորն արվեստում և գիտության, տեխնիկայի, առօրյա գործածության իրերի մեջ տարբեր բաներ են: Հիմ իրերն, արտադրութան գործիքները դուրս են գալիս գործածությունից, նրանց փոխարինում են ուրիշ իրեր ու գործիքներ: Մինչդեռ հին արվեստը, մանավանդ այժմ, իր փառքի ու ճանաչման գազաբակետին է: Ինչու՞ են մինչև օրս ապրում Բախը, Լեոնարդո դա Վինչին, Բեթհովենը, Չոմերոսը, որովհետև նրանք հեռու են «հին» հասկացությունից: Նրանց արվեստը շարունակում է ապրել, և ժամանակակից մարդն իրեն գտնում է նրանց ստեղծագործություններում:

Դժվար է սահմանազատել հինն ու նորը: Կա արվեստ, որ մոռացության գիրկն է անցել և ոչ մի կապ չունի ժամանակակից կյանքի հետ: Այդ արվեստը մոռացվել է, որովհետև չի արտացուլել այն դարաշրջանը, որի մեջ ստեղծվել է այն: Իսկ մեծ արվեստը միշտ էլ նոր է:

Արդի արվեստում նշանակալից շատ բան կա, որ կարող է ժամանակի քննությունը բռնել, բայց շատ բան էլ արհեստական է, ոչ կենսունակ:

Արևմուտքի արվեստի ժամանակակից հոսանքներում տեղ են գտել այնպիսի մտացածին հասկացություններ, ինչպիսիք են գերմարդկայինն ու գերերաժշտականը: Սա ակներևաբար նշանակում է, որ այս արվեստը չի կարող հասկանալի լինել հասարակ մահկանացուներին: Արդյոք սա չի՞ բխում այն տխրահեռակ միլիտոպայությունից, ըստ որի աշխարհն անճանաչելի է մարդու համար:

Ստացվում է այնպես, որ այդ արվեստը (հաճախ ուղղակի շառլատանության հասնող արվեստն) ըմբռնելու ընդունակ մարդիկ դեռ չեն ծնվել: Հետևաբար պետք է ծնվեն: Բայց այդ դեպքում ինչո՞վ բացատրել, որ մինչև մեր օրերն ապրող արվեստը հասկանալի է եղել իր ժամանակին: Այդ հեղինակների կենդանության օրոք արդեն նրանց արվեստը հանճարեղ է համարվել: Չհաշված առանձին պարադոքսային դեպքեր, որ կապված են, ասենք, Բախի ու Շուբերտի հետ: Սակայն պարադոքսները պատմություն չեն ստեղծում:

Մ. Ռ. - *Բայց ժամանակ առ ժամանակ արվեստում լինում են նոր ձևերի, արտահայտչական նոր միջոցների որոնումներ: Ի՞նչ կարծիք ունեք այդ մասին:*

- Ամեն մի նորն ունի իր կողմնակիցներն ու հակառակորդները: Ի՞նչ են իրենցից ներկայացնում նորի «դրաշակակիրները», նրանք, ովքեր հասկանում են այդ նորի գեղարվեստական արժեքը: Այս մասին արժե մտածել: Իսկ դրանից այն կողմ խոսքը կյանքին է, ժամանակինը: Օրինակ, Դեբյուսին: Նրա արվեստը հանդիպեց դիմադրության: Նրան մեղադրում էին էպիգոնություն մեջ: Մեղադրողները ֆրանսիացի վագներականներն էին, կոմպոզիտոր Դենդիի գլխավորությամբ: Բայց անցավ որոշ ժամանակ, և համաշխարհային առաջավոր հասարակայնությունը բարձր գնահատական տվեց Դեբյուսիի ստեղծագործությանը, նրա արվեստում նորարարական շատ բան գտավ: Այնժամ ամեն ինչ ներկայացավ ուրիշ լույսի ներքո: Այստեղ դրական դեր խաղաց ռուս դասականների ազդեցությունը՝ Դեբյուսին նրանց միջոցով հաղորդակցվեց Արևելքին: Վերջինս նրա համար ստեղծագործական ներշնչման աղբյուր դարձավ: Բայց նա իսկական ֆրանսիացի էր և այդպիսին էլ մնաց՝ թափանցելով իր ժամանակի նորագույն հոսանքների մեջ, համարձակ որոնումներ կատարելով, նա ստեղծեց ֆրանսիական ժամանակակից նոր երաժշտություն:

- *Ձեզ ինչ-որ չափով համարո՞ւմ եք Դեբյուսիի հետևորդը:*

- Այո՝ Դեբյուսին մեր ժամանակներում այնպիսի դեր խաղաց, ինչպիսին անցյալում խաղացել էր Բեթհովենը: Դեբյուսին մեծ բարենորոգիչ է... Կար ժամանակ գերմանացիներն ասում էին, թե Վագները «Հռեմոսի Ոսկի»ն օպերայում սպառել է արտահայտչական բոլոր միջոցները: Բայց ժամանակը ցույց տվեց, որ այդպես չէ, որ նա միայն անսահման ընդլայնել է մաժորամինորային համակարգը: Դեբյուսին, ելակետ ընդունելով ռուս կոմպոզիտորների (Մուսորգսկի, Բորոդին, Ռիմսկի-Կորսակով) ստեղծագործական արակտիկան, ստեղծեց լադատոնայնական այնպիսի համակարգ, որը նոր հորիզոններ բացեց երաժշտական արվեստի առջև: Այդ համակարգի էությունը հետևյալն է. հնչյունային ամբողջ փոխկապակցությունը դուրս է գալիս վիեննական դասականների մաժորամինորային համակարգի սահմաններից այն բանի շնորհիվ, որ անասելի մեծանում է լադային ինտոնացիայի, այստեղից էլ՝ լադային հարմոնիայի դերը: Սա երաժշտական մտածողության ասպարեզում ստեղծագործական մեծ նվաճումների տանող նոր ուղի էր: Այս համակարգի հիմքում ընկած էր տարբեր ժողովուրդների երաժշտական մշակույթների սինթեզը:

- *Ինչպիսի՞ն է, ձեր կարծիքով, երաժշտական նոր համակարգերի և արտահայտչական միջոցների փոխկապակցությունը:*

- Միջոցները երբեք չեն փոխվում, մնում են այնպիսին, ինչպիսին եղել են: Ամբողջ հարցն այն է, թե կոմպոզիտորն ինչպես է վերաբերվում այդ միջոցներին: Ավելի ծիշտ, արտահայտչական միջոցների ընտրությունը պետք է ելնի կոմպոզիտորի ստեղծագործական խառնվածքից:

- *Ինչպե՞ս եք ըմբռնում գեղարվեստական ձևի աստիճանական զարգացումը, երբ՝ ձևը որոշվում է բովանդակությամբ:*

- Բացառված չէ նոր ձևերի ու ժանրերի ստեղծումը, դրանք փոխարինելու են գալիս մեզ համար արդեն դասական դարձած հին ձևերին: Բայց դրան պետք է հասնել ոչ թե կործանման, այլ զարգացման ուղիով: Օրինակ, օպերային ժանրը: Հարկ կա՞

արդյոք խորտակել հին սխեմաները, այն, ինչ կազմավորվել ու բյուրեղացել է դարերի ընթացքում: Այն, ինչ դարաշրջանի գեղարվեստական նվաճումն է եղել: Կարծում եմ՝ ոչ: Մի՞թե չենք կարող, առանց այդ սխեմաները խորտակելու, հարստացնել, հագեցնել նոր սյուժետով:

- *Եվ դա բավակա՞ն է արդյոք, որ այդ օպերան արդիական համարվի:*

- Իհարկե: Կոմպոզիտորները, խախտելով օպերայի ժանրային առանձնահատկությունները, ոչ մի նոր բան չեն ավելացնում այդ ժանրին: Գուցե մեր ժամանակի առավել լիակատար և տիպական բնութագիրը տալու համար ֆուտբոլն էլ պիտի «ներմուծել» օպերա...

Ծիշտ այդպես էլ, եթե խախտենք սիմֆոնիայի դասական ցիկլայությունը՝ ժամանակակից սիմֆոնիա ստեղծելու նպատակով, այդ նոր երկն այլևս սիմֆոնիա չի լինի, այլ ինչ-որ ուրիշ բան: Եվ կարող է ուրիշ կերպ կոչվել: Չէ՞ որ երաժշտական մշակույթի մեջ, դարերի ընթացքում, ստեղծվել են ամուր ավանդույթներ, որոշակի հասկացություններ սիմֆոնիայի, սոնատի, օպերայի մասին: Եվ նրանց բնորոշ հատկամիշների խախտումն ու վերացումն ամենևին էլ չի նշանակում, թե ստեղծվել է մի նոր բան:

- *Իսկ դա նշանակո՞ւմ է արդյոք, թե ձևի հետ մեկտեղ վերափոխվում է ժանրը ևս:*

-Հավանաբար այդպես էլ լինում է: Ժանրը նույնպես ժամանակաշրջանի գեղարվեստական արտացոլումն է:

- *Ձեր կարծիքով, ո՞ր ժանրերն են առավել բնորոշ մեր ժամանակաշրջանին:*

- Առայժմ բոլորը, որովհետև չկա այնպիսի մի ժանր, որը փոխարինի նրանց: Մեզ ոչ մի բան չի խանգարում, որ ստեղծենք ժամանակի ոգուն կատարելապես ներդաշնակ սիմֆոնիա: Ներկայումս չափազանց եռանդուն որոնումներ են կատարվում ձևի և արտահայտչամիջոցների ասպարեզում: Սակայն առայժմ դրանք մնում են սոսկ որոնումներ:

- *Բայց դուք, կարծո՞ւմ եմ, չեք միտում արդի երաժշտական արվեստի ակնառու նվաճումները:*

-Իհարկե ոչ: Նորի կողմնակից կոմպոզիտորների ստեղծագործական որոնումներում հետաքրքիր շատ բան կա: Վերջին տասնամյակների ընթացքում ի հայտ են եկել բազմաթիվ հոսանքներ ու տարբեր ուղղություններ: Ասենք, դոդեկաֆոնիան, որն արդեն 50 տարուց ավելի գոյություն ունի, ալետորիկան, սոնորիկան, կոնկրետ երաժշտությունը, որոնք մեծ տարածում գտան XX դարի երաժշտության մեջ: Բայց կան բոլորովին նոր ուղղություններ, ինչպես, օրինակ, երաժշտությունն, ուր հնչյուններին փոխարինում են հեղինակի մտահղացմամբ ինչ-որ երաժշտություն «պատկերող» գունային գծերը: Սա երևակայական երաժշտություն է:

Բայց պետք է ասեմ, որ այս բոլորի մեջ ամենահետաքրքիրն, իմ կարծիքով, տեմբրային դրամատուրգիայի ասպարեզում կատարվող որոնումներն են, ուր տեմբրն արտահայտում է բովանդակություն, տրամադրություն, գաղափար: Այստեղ բավական հետաքրքիր գյուտեր կան: Նշանակալից արդյունքների են հասել, օրինակ, Օլիվիե Մեսսիանը, Շոտկիաուզենը, Բերիոն: Նրանք ստեղծագործում են այդ ոճով, սակայն տարբեր մաներով:

- *Ավելի հանգամանորեն պատմեք, խնդրեմ, տեմբրային ոճի մասին:*

- Սովորաբար այդ ոճով ստեղծագործողները կիրառում են երկու եղանակ: Ասենք, նվագախմբի համար առավելապես կատարվող որոնումներն են, ուր տեմբրն արտահայտում է բովանդակություն, տրամադրություն, գաղափար: Այստեղ բավական կոմպոզիտորք ի՞նչ վերաբերմունք պիտի ունենա այդ հոսանքներին և մասնավորապես տեմբրային դրամատուրգիայի նկատմամբ: Նա այդ հոսանքները կարո՞ղ է ընդունել որպես ելակետ, ստեղծագործական հիմք, թե պետք է դրանցից վերցնի սոսկ այն, ինչ անհրաժեշտ է երաժշտական արտահայտչականության սեփական միջոցները հարստացնելու և ընդլայնելու համար: Կարծում եմ, սկզբունք պետք է ընդունել երկրորդը: Այլապես եթե գեղարվեստական այս ուղղություններից որևէ մեկն ստեղծագործական դառնա կոմպոզիտորի համար, վերջինս հեշտությամբ կարող է էպիգոնության մեջ ընկնել:

- *Իսկ իմ՞չ դպրոց կամ ուղղություն է առանձնապես ուժեղ ազդեցություն գործել մեր ազգային երաժշտական մշակույթի զարգացման վրա:*

- Եվ վիեննական հին դպրոցը, և՛ ռուս դասական, և՛ XX դարի ամբողջ երաժշտությունը: Յուրաքանչյուրը՝ տարբեր փուլերում:

Ակսենք մեր ժողովրդական երգերի ներդաշնակման հարցից: Սկզբում, ինչպես անում էր Կարա-Մուրզան, հայ ժողովրդական երգերը ներդաշնակում էին՝ կիրառելով վիեննական դասականների հանրաճանաչ ոճը: Եվ պատահական չէ, որ Կարա-Մուրզան մշակելու համար ընտրում էր ժողովրդական այնպիսի երգեր, ուր պարզորոշ լսելի էր դոմինանտը: Բայց ահա եկավ Կոմիտասը, վերցրեց իր և ուրիշների ելակետային դիրքորոշումը և ժողովրդական երգերի ներդաշնակման ուղին որոնեց հայ երաժշտության լադատոնային ակունքներում: Պետք է ասել, որ նման ուղիով են ընթացել նաև Գլինկան, Բորոդինը, Մուսորգսկին, Ռիմսկի-Կորսակովը: Այստեղ նրանք իսկական հեղափոխականներ էին, և վիթխարի է նրանց ազդեցությունը համաշխարհային երաժշտության զարգացման գործում: Նրանք էլ հենց ամենամեծ մղումն առաջ բերեցին երաժշտության մեջ նոր խոսքի որոնումներում: Ռուս կոմպոզիտորների ստեղծագործական փորձից օգտվեցին ազգային շատ դպրոցներ:

- *Ի՞նչն է ձեր կարծիքով, առավել այժմեական այսօր «Հզոր խմբակի» ստեղծագործական ժառանգության մեջ:*

- Այն, որ «Հզոր խմբակի» կոմպոզիտորները իրանալի էին հասկանում իրենց ժամանակի խնդիրները: Նրանց գաղափա-

Գրիգոր Եղիազարյանի 100-ամյակին. 2008 թ.



Կոմպոզիտորներ՝ Գիա Կանչելի, երաժշտագետ՝ Արաքսի Սարյան, Գրիգոր Եղիազարյան, «Դիլիջան» ստեղծագործական տուն, ԴԿՄ, 1967 թ.

րական հենքը ռուս ժողովրդական երաժշտությունն էր, ռուս ժողովրդական արվեստը: Նրանք իրենց առջև նպատակ էին դրել ստեղծել ազգային ինքնուրույն և ինքնատիպ երաժշտություն: Եվ, աշխատելով այս ուղղությամբ, հասան վիթխարի արդյունքների:

Արվեստում հրաշքներ չեն լինում, ինչպես հեքիաթներում: Ստեղծագործական խնդիրները լուծվում են նպատակամետ ձգտումով, տքնաջան աշխատանքով, միահանուռ ուժերով, գործում մասնակցություն բերելով հասարակական կյանքին:

- *Ի՞նչ կարծիք ունեք հայ պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման վրա օրինետալիզմի ազդեցության մասին:*

- Եղավ մի շրջան, երբ ռուս և արևմտաեվրոպական օրիենտալիզմը հայ պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման մեջ նշանակալից դեր խաղաց: Սակայն այդ փուլն արդեն անցել է: Մեր երաժիշտներն առաջընթաց մեծ քայլ են արել, իրենց ետևում թողնելով օրիենտալիզմն: Ստեղծելով ազգային պրոֆեսիոնալ դպրոց, հայ կոմպոզիտորներն ընդիուպ մոտեցան սեփական ազգային հարստությունները մշակելու հարցերին: Հայ պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման ուղեկցքին, այդ նպատակին հետամուտ, ընթացան Կոմիտասն ու Ռոմանոս Մելիքյանը՝ խուսափելով օրիենտալիզմից: Այժմ օրիենտալիզմը մեր կոմպոզիտորների համար կարող է արգելակ լինել միայն՝ նրանց զարգացման ճանապարհին: Օրիենտալ երաժշտություն գրող հայ կոմպոզիտորը նույնն է, թե մարդ օտարական լինի հայրենի երկրում: Անիմաստ է սեփական ազգային հարստություններին մոտենալ շրջանցիկ՝ ռուս և արևմտաեվրոպական օրիենտալիզմի ճանապարհով: Վառ ու ինքնատիպ արվեստ տանող բոլոր ուղիներն անցնում են ազգային մշակույթի միջով:

Այս առումով Կոմիտասն այսօր մեզ համառ անգնահատելի է: Նրա ուղին ընկալվում է որպես առայժմ միակը հայ երաժշտության զարգացման մեջ: Սա ազգային երաժշտության մեջ եվրոպական առաջավոր մշակույթի խոր կիրառման օրինակ է: Ուստի համարձակորեն կարող ենք ասել, որ Կոմիտասի խմբերգերն աշխարհի ուզած երկրում կընկալվեն որպես ազգային մեծ կլասիկայի փայլուն նմուշներ:

-*Պատմեք, խնդրեմ, «Արա գեղեցիկ և Շամիրամ» բալետի վրա ձեր աշխատանքի մասին:*

-Հղացումն իմ մեջ վաղուց էր հասունացել: Բայց, ցավոք, այդ թեմայով գրված լիբրետտոները ինձ չէին բավարարում: Վերջապես ընտրությունը կանգ առավ մի լիբրետտոյի վրա, որի հեղինակը տաղանդավոր բալետմետրստեր Մաքսիմ Մարտիրոսյանն է: Լիբրետտոյի հիմքը խորենացու պատմությունն է, գրված է սուր, արդիական շնչով: Այս երկու տարվա ընթացքում գրել եմ երկու գործողություն (չհաշված մինչև այդ ստեղծված առանձին հատվածները): Այժմ աշխատում եմ երրորդ վերջին գործողության վրա: Հուսով եմ աշխատանքն ավարտել տարեվերջին:

Երբ գրում էի «Սևան» բալետը, մի խնդիր ունեի՝ ցույց տալ Հայաստանը գունային իր ամբողջ գամմայով, պատմել նրա այսօրվա մասին այնպիսի լեզվով, որի ակունքները ժողովրդական արվեստի մեջ են: Իմ նոր գործում պատկերվում է հայ ժողովրդի պայքարն այն ժամանակվա հզոր պետության՝ Ասորեստի դեմ: Դիմելով մեր ժողովրդի պատմության ամենախեռավոր ու ամենաողբերգական էջերից մեկին, ձգտում եմ այն մոտեցնել այսօրվան, դարձնել այժմեական՝ պատմելով ժամանակակից կոմպոզիտորի լեզվով:

- *Հետագա ի՞նչ ծրագրեր ունեք, չե՞ք պատրաստվում արդյոք նոր սիմֆոնիա գրել:*

- Ոչ, մտադիր չեմ: Ուզում եմ հնարավորին չափ շուտ ավարտել բալետը և վոկալ գործեր գրել:

- *Ի՞նչ մղում է տալիս ձեզ հետաքրքրությունն արվեստի մյուս տեսակների նկատմամբ: Դուք մի առիթով ասացիք, թե ձեզ շատ է հետաքրքրում պատմությունը:*

-Չեմ կարող ասել՝ արվեստի մյուս տեսակները մղում տալիս են իմ ստեղծագործությանը, թե ոչ, բայց ես, իրոք, շատ եմ հետաքրքրվում պատմությամբ, նկարչությամբ և գիտությամբ նոր հայտնագործություններով: Շատ նկարիչներ կան, որոնց սիրում և բարձր եմ գնահատում: Եվ, հավանաբար, այս ամենը կարող է ինչ-որ գաղափարներ ներշնչել ինձ:

Հարցազրույցը վերահրատարակում ենք «Սովետական արվեստ» ամսագրից, 9, 1972 թ. համարից՝

ՍՄՐԱՐՈՒՄ ՌՈՒՆԿԱՅԱՆ արվեստագիտության դոկտոր, ՀՀ ԳԱԱ ՄԻ առաջատար գիտաշխատող

Звездные часы Эдуарда Айрапетяна

Произведения Эдуарда Айрапетяна звучали на многих международных фестивалях, – в Будапеште (1986), Загребе (1991), Швеции (1992), Салониках (1998), Одессе (1998,1999), Берлине (2010). Его музыка с успехом исполнялась в концертах в разных городах Европы, России, США, Канады, в странах Прибалтики, на Кипре, в Ливане... За свои заслуги он отмечен Премией им. Арама Хачатуряна Министерства культуры РА и Союза композиторов (1993), Премией им. Ваана Текеяна (2008), Золотой медалью Министерства культуры РА. Эдуард Айрапетян является Заслуженным деятелем искусств Армении. В начале 2018 года Эдуард Айрапетян был удостоен звания лауреата Государственной премии Армении.

За долгие годы неустанного творческого труда он собрал в своем творческом портфеле огромный список произведений, которые, к тому же, написаны в разных жанрах. Здесь и симфонии для большого симфонического оркестра, которых у него четыре (Первая и Третья были исполнены), Симфоническая поэма “Сибелиус сон” прозвучавшая в 2011 году, Симфония для струнного оркестра “Посвящение памяти Арама Хачатуряна”, созданная в 2013–м, Симфоническая картина “Павана”, которая была включена как обязательное сочинение на 12–м конкурсе имени Арама Хачатуряна, посвященном дирижерскому искусству (2016), а также целый ряд произведений для камерного струнного оркестра и замечательные вокальные циклы. Он автор 19–ти сонат и более 20 инструментальных концертов, которые написаны для разных солирующих инструментов, – для флейты, гобоя, кларнета, фагота, для скрипки и виолончели, для альта, а также для двух инструментов с оркестром.

Музыка Эдуарда Айрапетяна рождается в тесном контакте с исполнителями и исполнительскими коллективами. Он пишет много посвящений, искренне восхищаясь талантом и мастерством армянских исполнителей; среди них Медея Абрамян, Баграт Варданян, Александр Косемян, Нарек Ахназарян, дирижеры Меружан Симонян, Арам Карабегян, Сергей Смбалян, а сегодня, и его внучка Полина Шарафян, скипачка.

В исполнении Государственно–го молодежного оркестра под управлением Сергея Смбаляна в последние годы постоянно звучат его симфонические премьеры. Одна из последних – Концерт для фортепиано и большого симфонического оркестра, который написан в творческом контакте с пианисткой Наре Аргаманян и дирижером Сергеем Смбаляном. Премьера этого концерта состоялась 28 февраля 2017 года в Зале имени Арама Хачатуряна, вызвав горячий прием многочисленной аудитории. Именно это произведение и стало поводом представления его на Государственную премию Армении.

Любители музыки чаще всего находят поддержку в своих запросах в классической музыке. Современная музыка остра и часто безжалостна к слуху. Порой она просто неинтересна и несодержательна. И если современную музыку внимательно слушает большой концертный зал, то это уже что–то значит, это знак настоящего музыкального события. Музыку Эдуарда Айрапетяна не только внимательно слушают, но и воспринимают с той степенью волнения, которое, как известно, является первым доказательством встречи с прекрасным.

Интересно такое мое наблюдение, – после премьер Эдуарда Айрапетяна возникает какая–то тишина, словно в пространстве звуков готовится место, которое вот–вот будет заполнено новым сочинением композитора. Я называю эту ауру шлейфом музыки Айрапетяна. Любой разговор о современной музыке невольно касается его творчества и почти всегда высказываются ожидания его следующего произведения. Композитор заинтриговал своих слушателей и теперь они не критики его и не читатели, а нечто коллективное подсознательное, которое участвует в творении музыкальной культуры на данном отрезке времени. И этот общественный интерес к личности художника, возвышающий его на данный момент над кругом коллег, сподвижников и соратников, нисколько не умаляет значения каждого из членов этого коллективного целого. Произведение искусства создается индивидуумом, но куется в массе, в атмосфере истории и культуры.

И знак того, что на авансцену нашей художественной

жизни выходит событие, касающееся современной музыки и приобретает при этом значение государственной важности, вселяет большие ожидания в развитие нашей культуры. Значит, она в действии.

Конечно мы будем с нетерпением ждать концертов, где прозвучат произведения Эдуарда Айрапетяна, как и концертов предыдущих лауреатов Государственной премии, композиторов Вардана Аджемяна и Ерванда Еркяна, Рубена Саркисяна. Но почему вот это значимое награждение не сопровождается по протоколу серий авторских концертов, которые должны представить наряду этих первых и лучших?

Этот чисто организационный момент не совпадает с теми большими возможностями, которыми обладает наша музыка, армянское композиторское и исполнительское искусство, а также, с интересом широкой, в своем составе молодежной аудитории, которая массово присутствует на больших концертах современной музыки. Народ должен знать своих героев. Эта, несколько утилизированная фраза, однако, сегодня звучит очень актуально. За ней тот самый праздник искусства, который естественно должен сопровождать большие творческие достижения в виде концертов, пресс–конференций, публикаций, а дальше, в интересах национальной культуры в целом, в продвижение этих достижений на мировую сцену. В музыке это делать труднее, чем в киноискусстве, где можно просто послать флешку с фильмом на какой–нибудь международный конкурс. Музыкальная продукция требует более тонкой и кропотливой работы, в которую должны быть вовлечены и государственные средства, специально выделенные на пропаганду высоких достижений, и работа исполнительских коллективов.

Ничего не может быть прекраснее зала, который приветствует талантливого композитора и превосходных исполнителей, на данный момент достигших момента истины, когда в оптимистический аккорд сливаются творческая свобода, государственная поддержка и народное признание.

МАРГАРИТА АШОТОВНА РУХКЯН
*доктор искусствоведения,
ведущий научный сотрудник ИИ НАН РА*

ԷԴՈՒԱՐԴ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ

Հետաքրքիր ճանապարհ են ընդհանրապես անցնում հարվածային գործիքների կատարողները մինչև գալիս են հասնում տարբեր ժողովուրդների գործիքներին տիրապետելուն, վերաբերվելուն այնպես ինչպես դասական արվեստին, քանի որ վերջինիս կրթությունը կարող են ստանալ երաժշտական դպրոցներից սկսած: Այս առումով յուրօրինակ ճանապարհ է անցել Էդուարդ Հարությունյանը: Նա Ռոբերտ Յուլյանի մոտ սովորել է 1979-ից մոտավորապես 3-4 տարի, այնուհետև միաժամանակ նվագել է մանկական «Լապտերիկ» խմբում: Հետագայում ուսումը շարունակել է տեխնիկական գիտությունների գծով ԵՊԻ մեխանիկայի ֆակուլտետում, սակայն շարունակել է նաև երաժշտությամբ զբաղվել, ուսանողական ջազային խմբում և մասնակցել Ուսանողական գարունների փառատոնին: Ձմեռական ծառայության ընթացքում էլ Անդրկովկասյան զինվորական օկրուգի շտաբի նվագախմբում է նվագել:

1991-ից առաջին անգամ, երբ Լորիս Ճգնավորյանը հավաքագրեց առաջին Երիտասարդական սիմֆոնիկ նվագախումբը, որը հետագայում դարձավ Երևանի սիմֆոնիկ նվագախումբ, սկսվեց հենց այդտեղից նրա համագործակցությունը դասական սիմֆոնիկ նվագախմբի հետ և այդ ուղու ասպարեզում 1994-ից սկսվեց նրա արտիստական աշխատանքը ՀՊՖՆ-ում առ այսօր:

Է. Հարությունյանն այնուհետև 1991-2012 թթ. դասավանդել է Ս. Ջրբաշյանի երաժշտական դպրոցում հարվա-

ծային գործիքներ (քսիլոֆոն և փողը թմբուկ), ստեղծել է այդտեղ նաև «Փոքր ջազ» անունով անսամբլ: Այժմ դասավանդում է Ա. Տիգրանյանի անվ. երաժշտական դպրոցում: 1998-ին ստեղծվեց նաև Հայ հարվածային արվեստի կենտրոն (ՀԿ), որի նպատակն էր միավորելու մասնագետներին և ներկայացնելու նրանց և նաև հայկական արվեստն աշխարհին:

Նա բազմաթիվ համերգային շրջագայություններ է ունեցել, որոնց ընթացքում նաև մասնագիտական վարպետության դասեր է վերցրել տարբեր երկրների ազգային գործիքների լավագույն կատաող մասնագետներից, լրացնելով իր գիտելիքները մասնագիտության ոլորտում: Ինչպես օրինակ հնդկական թաբլաներ սովորել է Սուրբատա Բհատաչարիայից: Նա փայլուն տիրապետում է բրազիլական պանդերիո, պարսկական տոմբակ գործիքների կատարողական արվեստին, նույնպես այդ ազգերի կատարողներից վարպետաձևով:

- Երբ ազգային երաժշտություն է անհրաժեշտ լինում ցուցադրել, հրավիրվում են, օրինակ դեսպանատներից՝ Բրազիլիայի, Իրանի և այլ երկրների, հնչեցնելու համար իրենց ազգային երաժշտությունը: Սակայն, այդ գործիքներով նվագելու անհրաժեշտությունը լինում է նաև միջոց երաժշտություն ցուցադրելու նպատակով նույնպես ինչպես օրինակ՝ Մակաոյում ,



Գաֆեսյան կենտրոնում Էթնոջազ համերգի համար հավաքած հավածային ժողովրդական գործիքներով հարվածային կոմպլեկտ՝ հայկական կոպալ ռիդմ, կոմպեկտի մնացած գործիքների փոխարեն տեղադրված են դափեր, լրացված Percussion synthesizer-ով, Wind chimes (Քամու զանգ), Խաչիկ Սահակյանի կոմպոզիցիաների կատարում՝ հայկական ֆոլքը ջազային իմպրովիզացիաներում

Cirque Du Soleil կանադական ընկերության կազմակերպած շոու ծրագրում: Եվ այստեղ էլ, ես եմ մերը ցուցադրելու համար օգտագործել հայկական հարվածային գործիքների գրեթե ամբողջ ընտանիքը:

- Որքանով են հայ ժամանակակից արվեստում ընդգրկված հարվածային գործիքները:

- Հայ կոմպոզիտորները հաճախակի են սկսել օգտագործել տարբեր հարվածային գործիքներ, որոնք մախիկնում չեն եղել սիմֆոնիկ նվագախմբի կազմում: Դրանով հետաքրքիր են դարձնում երաժշտությունը: Սակայն ցանկալի է, որպեսզի նրանք առավել ուսումնասիրեն այդ գործիքների տեմբերային և ռեգիստրների հնչողության համադրությունների բազմազանությունը:

Որքան հետաքրքրական կլինեն եթե կազմակերպվեր Հայաստանում հարվածային գործիքների փառատոն, քանի որ մեր ազգային ռիթմերը շատ բազմազան են, պարզից մինչև բարդ իրենց տեսակներով հարուստ և բարձր ընկալողականությամբ աշխարհի ցանկացած ռիթմ թե՛ մասնագետների, որոնց և փայլուն տիրապետում են, և թե՛ հայ ունկնդրի համար:

Մաղթենք մասնագետներին իրականացնելու այդ հետաքրքիր մտահղացումը հատկապես, որ ունենք Հայ հարվածային արվեստի կենտրոն (ՀԿ), որ նորություն է մեր մշակույթում:

ԳՐԱՐ ԵԱԳՈՅԱՆ
երաժշտագետ

ԱՇԽԱՐՀԻ ԶԱՐԿԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ, որոնցով նվագում է Էդուարդ Հարությունյանը



Կոնգաներ (Լատին-ամերիկյան հարվածային գործիքներ, բոնգոներ) տարբեր լարվածքի՝ Լա, դո, ռե, մի, սոլ



Կահոն պերուական գործիք, որն հայտնի է դարձել իսպանական ֆլամենկոյի կատարմամբ, Մակաո, Cirque Du Soleil կանադական ընկերության համաշխարհային շոուն

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ «ԾԱՂԿԱԶԱՐԴ» ՎՈԿԱԼ ԱՆՍԱՄԲԼԸ

«Ծաղկազարդ» վոկալ անսամբլն Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի նախաձեռնությամբ ու օրհնությամբ հիմնադրել են մի շարք մասնագիտական անսամբլներ և երգչախմբեր: «Ծաղկազարդ» վոկալ անսամբլը հիմնադրվել է 2007-ի սեպտեմբերի 18-ին, գեղարվեստական ղեկավարն օպերային երգչուհի Լիլիթ Գրիգորյանն է և երգչախմբի արտիստներ՝ Ռոզա Հովսեփյանը, Լիլիթ Գևորգյանը, Աննա Ավետիսյանը, Մարիամ Հովհաննիսյանը, Բելլա Ամարյանը, Հասմիկ Ղազարյանը ձեռնբերողներն են: Կոնցերտ-մայստերն է՝ Էլիզա Սամվելյանը՝ դաշնակահարուհի, երգեհոնահար: Համերգային տարբեր ծրագրերով նրանք շրջագայել են Ռուսաստանում, Ֆրանսիայում, Իտալիայում, Ավստրալիայում, Գերմանիայում, Հորդանանում և այլ երկրներում: Մասնակցել են հայաստանյան բազմաթիվ համերգների, փառատոների, այցելել ու համերգներ կազմա-



Արարատ Հայրապետական թեմի «Ծաղկազարդ» վոկալ անսամբլ, գեղարվեստական ղեկավար՝ Լիլիթ Գրիգորյան Երևան, Ա. Բաբաջանյանի անվ. համերգասրահ, 2017 թ.

կերպել մանկատներում ու ծերանոցներում:

2015 թ. ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը «Ծաղկազարդ» վոկալ անսամբլին արժանացել է շնորհակալագրի՝ հայ հոգևոր և ազգային երգարվեստի զարգացման գործում

ունեցած նշանակալի ավանդի համար:

2017 թ. խմբի հիմնադրման 10-ամյակի առթիվ ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը պարգևատրել է «Կոմիտաս»ի մեդալով: «Ծաղկազարդ» վոկալ անսամբլը բազմաթիվ շնորհակալագրերի է արժանացել նաև ՀՀ զինված ուժերի և Արցախի Պաշտպանության բանակի զորամասերում, Սփյուռքի հայ գաղթօջախներում համերգներով հանդես գալու համար:

Սեքստետը յուրաքանչյուր կիրակի և տոնական օրերին մասնակցում է նաև թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում մատուցվող Ս. Պատարագներին, նաև հոգևոր տարբեր արարողությունների: Սերտորեն համագործակցում է ՀՀ Սփյուռքի նախարարությանն ու Երևանի քաղաքապետարանին մասնակցելով խոշոր ու կարևոր տոներին, միջոցառումներին: Ունի բազմաժանր երգացանկ, որում ընդգրկված են հայ ազգային, հոգևոր երգեր, եվրոպացի և ռուս կոմպոզիտորների ստեղծագործություններ և մշակումներ: Երկացանկում մեծ տեղ են զբաղեցնում Կոմիտասի, Սայաթ-Նովայի, Արմեն Տիգրանյանի, Առնո Բաբաջանյանի ու շատ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

ԳՐԱՐ ՀԱԳՈՅԱՆ
Երաժշտագետ

МУЗЫКАНТ, ЭНЕРГЕТИК, МАТЕМАТИК

Еще в древние времена Пифагор говорил: *“Математика подразделяется на четыре раздела: алгебру, геометрию, астрономию и музыку”*. Людей, посвятивших себя естественным и точным наукам вкупе с музыкой, по сравнению с узкими специалистами, в мире очень мало. Настолько мало, что мы можем, назвать их поименно: Пифагор, сыновья Галлилея и Леонардо, Руссо, Моцарт, обожавший математику, Бородин, Кюи и другие.

Человек, о котором пойдет речь, должен был стать многообещающим музыкантом и занять достойное место среди советских виолончелистов, однако страсть к математике и фантастическим механизмам привела его к созданию первого, если не в мире, то в Советском Союзе, читающего автомата (распознающего буквы и цифры), появившегося за 5 лет (1963) до создания своего аналога за рубежом.

Имя Эмиля Оганесяна, как и его изобретение, до самой его смерти (1925 – 1989) было засекречено. Он родился в семье, где царили искусство, музыка. Своим слухом он был обязан деду – Арутюну Оганесяну – известному во всем Закавказье народному певцу из села Каринтак. Музыкальное образование получили его тетя – Ольга Оганесян–Алтунян, супруга основателя Ансамбля песни–пляски Татула Алтуняна, дядя – каманчист Левон Оганесян. Музыкальными данными обладал и его отец – художник Сако Оганесян, неплохо игравший на сазе. Поэтому неудивительно, что любовь к музыке у него проявилась с детского сада, где он подружился с будущими выдающимися музыкантами Арно Бабаджаняном и Александром Арутюняном. Другьями его детства были также братья Газарос и Сергей Сарьяны, Эдвард Мирзоян, Адам Худоян и другие.

В возрасте 12 лет Э. Оганесян поступил музыкальную школу им.А. Спендиарова в класс виолончели, который вел родственник его матери – Телемак Тер–Аветисян. Все уроки он схватывал на лету, однако была проблема с инструментом: на всю школу – одна виолончель, а учеников было двое – Эмиль Оганесян и Геронтий Талалян, в будущем выдающийся виолончелист, профессор ЕГК. Один день виолончель находилась у него, другой – у Эмиля. Так и занимались, пока Эмилю не купили инструмент видного скрипичного мастера Шаэна Ерицяна. В тяжелые для семьи Оганесянов дни, когда по ложному доносу был арестован отец Эмиля, его переводят в школу N2 им.Саят–Новы, где в то время курс сольфеджио вела его тетя по матери – Елизавета Gabrielyan. Здесь Эмиль за три года с блеском оканчивает курс виолончели у молодого в то время педагога А. Чаушяна, в дальнейшем профессора ЕГК.

В эти годы он пробовал сочинять музыку для своего любимого инструмента, делать переложения известных мотивов. Сохранились рукописи переработанных им для виолончели произведений “Колыбельная” и песни “Тачанка”. Он настолько хорошо владел инструментом, что часто музицировал в камерном самодеятельном ансамбле, организованном при школе им. Пушкина (где он учился) его одноклассником и близким другом, композитором Владиленом Бальяном; в молодежном составе оперного оркестра, руководимого К. Сараджевым и М.Тавризяном, где он играл с такими музыкантами, как кларнетист Торос Лавчян, альтист



Эмиль Саркисович Оганесян, 1956




Эмиль Оганесян с матерью, Т. А. Габриелян и отцом, С. А. Оганесяном, 1936 год

Сергей Хачатрян, виолончелист Альфред Кароян, тромбонист Гугуш Агаян и другие.


После окончания школы Эмиль хотел подать заявление сразу и в Политехнический институт (на факультет энергетиков), и в консерваторию (в класс виолончели А. Чаушяна), однако в то время это было невозможно и он выбирает Политехнический институт. Все тяжелое военное время он работает на заводе N 447, где ремонтирует поврежденное оборудование гидросамолетов МБР–2, прибывавших в Ереван с фронта, однако в свободное время играет на виолончели. Кроме этого, он очень любил музицировать на фортепиано и имел неплохую технику, благодаря частным урокам С. Е. Сааруни.

После войны, работая на ответственных постах в Армэнерго, а затем и в Ереванском институте математических машин, он конструирует музыкальные акустические системы, телевизоры, радиотелекомбайны, проигрыватели, не уступающие, но даже превосходящие по своим характеристикам аналогичные заводские изделия. Радиотелекомбайн – мечта каждого музыканта–профессионала. Первый такой прибор был сконструирован Эмилем Оганесяном в 1950–е годы. Он состоял из телевизора, магнитофона, проигрывателя, всеволнового радиоприемника и отвечал всем тогдашним требованиям.

Будучи сотрудником ЕрНИИММ, он задолго до профессора В. Л. Гошовского пришел к идее заняться расшифровкой хазов с помощью ЭВМ, однако сильная занятость, повышенная секретность работы и частые командировки не позволили ему осуществить эту благородную мечту. Э. Оганесян благоговел перед Комитасом и его творчеством, внимательно изучал вопросы истории и теории армянской модии по книге Х. Кушнарева.



Телерадиоккомбайн (1956) и читающая ЭВМ “Маштоц” (1964) Эмиля Оганесяна



Будучи профессиональным кинолюбителем, в соавторстве с ближайшим из друзей, поэтом П. Севаком, он решил снять фильм по его поэме “Несмолкаемая колокольня”. Был готов сценарий, реквизит, поэтом был создан – за одну ночь (!) – специальный вариант поэмы, адаптированный для кино, но трагическая гибель Севака помешала осуществлению этого грандиозного плана.

Свою несбывшуюся мечту стать музыкантом он воплотил в приобретении большой коллекции фонозаписей как классической, так и эстрадной музыки. Его дом посещали друзья–музыканты – Э. Мирзоян, А. Арутюнян, А. Тертерян. Именно они, обнаружив музыкальный слух у его сына, автора этих строк, рекомендовали Эмилю Саркисовичу отдать его в музыкальную школу им.П. И. Чайковского. Он часто говорил: *“Не я, хоть ты в этом аспекте осуществил мою мечту”*. Насколько это удалось – судить не нам.

САРКИС ЭМИЛЬЕВИЧ ОГАНЕСЯН,
кандидат искусствоведения,
преподаватель ЕГК им. Комитаса

ЦЕННОЕ ИЗДАНИЕ ОБ АРМЯНСКОМ ТРАДИЦИОННОМ ИНСТРУМЕНТАЛЬНОМ ИСПОЛНИТЕЛЬСТВЕ

Вышла в свет книга музыковеда–фольклориста, доцента Ереванской государственной консерватории им. Комитаса Анаит Киракосян под названием “Армянское народное инструментальное исполнительское искусство” («Հայ ժողովրդական նվագարանային կատարողական արվեստ», Ер., “Амроц груп”, 2011, 248 стр.). Ответственный редактор издания – кандидат искусствоведения, профессор ЕГК им. Комитаса Алина Пахлеванян.

Как известно, армянское традиционное (или как его называют, “народное”) инструментальное исполнительское искусство имеет исчисляемую тысячелетиями, непрерывную, богатейшую историю, являясь во все времена одной из характерных атрибутов повседневной жизни армян. Об этом свидетельствуют археологические находки, относящиеся к различным эпохам исторической Армении (языческой, христианской) – не только “ископаемые” музыкальные инструменты, но и изображения инструменталистов на ритонах (древних костяных, глиняных, металлических питьевых сосудах в виде рога, обычно предназначенных для вина), чашах, вазах, кубках (древнейший из них – серебряный “карашамбский” кубок, датируемый II тысячелетием до н.э.) и других предметах быта. Красочными рисунками музыкантов (и музыкантш) с многообразными инструментами всех классов – духовых, струнных (щипковых, смычковых), ударных, изобилуют страницы средневековых армянских манускриптов. Те же “герои” фигурируют на барельефах старинных церквей, хачкаров, надгробных плит и т.д.

К теме неоднократно обращались армянские историографы Средневековья, упоминающие о барабанщиках, флейтистах, гусярах, трубачах, играющих “со всем благозвучием” своих инструментов, хороводах мужчин и женщин, оплакивающих покойников при звуках труб, кифар и арф, ансамблях гусанов, поющих, играющих на пирах и т.д.

Инструментальной музыкой, сольной, ансамблевой, сопровождался выступления армянских ашугов. “Из всех людьми хваленых пир полней звучишь ты, кеманча!”, – воспел свою кеманчу великий Саят–Нова (ныне легендарный инструмент ашуга хранится в Ереванском музее литературы и искусства им. Е. Чаренца).

Из ансамблей сазандаров, традиционных, интернациональных по составу исполнителей, вокально–инструментальных групп, популярных в закавказских городах, особенно XIX, первой половины XX веков (такие группы формировались из трех, четырех музыкантов, играющих на сазе, таре, кеманче, дапе, последний обычно выступал и в качестве певца), начался звездный путь многих армянских виртуозов–инструменталистов.

Это замечательные музыканты, с обширным, разнообразным репертуаром, в то же время глубокие знатоки, тонкие исполнители, в частности, одного из основополагающих жанров “изустно–профессиональной” (термин И. Еолян) музыки Востока, классических мугамов – тарист Бала Меликов (1888–1935), кеманчисты Саша Оганезашвили (Александр Оганян, 1889–1932), Левон Карахан (1891–1979) и другие, своей блистательной игрой востребованные не только в Закавказье, но и далеко за его пределами, в том числе, в России и в европейских странах.

Достойными их преемниками стали современные представители национального традиционного исполнительского искусства – тарист Согомон Сейранян, по характеристике его младшего коллеги, известного, талантливого тариста Ованеса Дарбиняна – один из столпов армянского исполнительского искусства на таре, он же – О. Дарбинян, впервые исполнивший на таре образцы армянской духовной музыки, дудукисты – непревзойденный Левон Мадоян, Ваче Овсепян, всемирно известные Дживан Гаспарян, Геворг Дабагян, канонистки – “королева канона” (по определению поэтессы Метаксе), “обладательница златых перстов” Анжела Атабекян, Асмик Лейлоян, Цовинар Ованнисян, Карине Ованнисян и другие, на примере, а зачастую и под началом которых, набирает творческие силы новая талантливая музыкальная “поросль” Армении.

Не лишне вспомнить о том, что армяне издавна славились как искусные мастера изготовления музыкальных инструментов. Так, в частности, как пишет Г. Геодакян: “Секрет” изготовления музыкальных тарелок хранила семья Зилчянов, обособившаяся в Константинополе. Музыкальные тарелки Зилчянов не раз удаивались высших наград на многочисленных международных выставках (“Гран–при” в 1867 г. в Париже, в 1851 и 1862 гг. в Лондоне, в 1873 г. в Вене и т.д.). Их производство затем было перенесено в США. И сейчас зилчяновские музыкальные тарелки считаются лучшими в мире”. Мастерством изготовления восточных традиционных инструментов был известен в Иране (Тебризе, Тегеране) варпет (мастер) Степан Будагян (1890–1967), по профессии мебельщик–дизайнер, резчик по дереву, в то же время талантливый музыкант–самоучка – тарист, кеманчист, игравший (и певший) армянские, персидские, турецкие народные песни, ашугскую музыку, виртуозный исполнитель мугамов “Раст”, “Чаргя”. Изготовленные масте–

ром и искусно инкрустированные им перламутром тар, кеманча, дап, ныне по его завещанию хранятся на Родине в музее истории города Еревана (см. брошюру этнографа Р. Пикичян “Возвращение мастера” – «Վարպետի վերադարձ»ը», Ереван, 2007).

Об армянском традиционном инструментальном исполнительстве и многочисленной “армии” армян–инструменталистов написано и сказано немало (тема никогда не теряла актуальности) в трудах историографов (как было отмечено выше), научной, художественной, мемуарной литературе, газетно–журнальной публицистике, по радио, телевидению, а сегодня и в электронной сети, на армянском и других языках, армянами и не только армянами.

Значительным вкладом в область изучения темы стало замечательное исследование выдающегося музыковеда – фольклориста Маргарит Брутян “Страницы истории исполнительского искусства армянской городской народной музыки” (на арм. языке, Ереван, 2001), один из основных библиографических источников книги Киракосян. Примечательна также содержательная книга Ф. Шушинского “Народные певцы и музыканты Азербайджана” (Москва, 1979), где в числе других музыкантов автор неоднократно упоминает армянских инструменталистов, обстоятельно рассматривает творчество наиболее выдающихся из них.

Книга А. Киракосян относится к разряду научно–популярных справочных изданий по армянскому традиционному инструментальному исполнительскому искусству. Такие создавались и ранее. Это, в частности, книги К. Мкртчяна “Армянские дудукисты” («Հայ դուդուկահարներ», Ереван, 1988), О. Дарбиняна “Армянские таристы” («Հայ բանահարներ», Ереван, 2004), “Армянские кеманчисты, канонисты, исполнители на уде” («Հայ բանահարներ, բանահարներ, ուղահարներ», Ереван, 2005).

Настоящее издание значительно отличается от предыдущих по большей полноте и многоохватности заключенных в него материалов. Это как бы своего рода энциклопедия армянского традиционного инструментального исполнительства. Киракосян обстоятельно представила свыше двухста армянских инструменталистов различных поколений, исполнителей почти на всех в настоящее время распространенных среди армян традиционных инструментах: духовых – это получивший международную известность дудук, продольные флейты шви (пикколо – маленькая флейта), сринг; струнно–щипковых – тар, саз, уд, канон; струнно–смычковых – кеманча, кемани, бамбир (последний сконструирован сравнительно недавно); струнно–ударных – сантур (цимбалы); ударных – доол, дап, и разных ансамблевых сочетаниях этих инструментов.

Анаит Киракосян – опытный, известный музыковед–фольклорист. Автор монографий, посвященных таристу О. Дарбиняну, композитору, педагогу, известному исполнителю армянских народных и духовных песен А. Восканяну, библиографии ее незабвенного Учителя М. Брутян, многочисленных статей и других материалов, в основном по армянской народной музыке. Она же составитель первого и пока единственного в своем роде нотированного сборника народных и ашугских песен армян провинции Периа Ирана (Пасадена,1996).

Нынешняя книга достойным образом венчает долгий, кропотливый, целенаправленный труд автора, когда в течение лет изучались архивные документы, соответствующая литература, велись многочисленные опросы инструменталистов. Был собран и затем плодотворно использован в книге обширный, достоверный, ценный материал, в том числе, ряд ранее нигде не публиковавшихся сведений, фотоснимков.

Бомльшую часть книги составляют очерки, посвященные отдельным музыкантам, распределенные автором по девяти тематическим разделам – “Дудукисты”, “Канонисты”, “Исполнители на сантуре” и т. д., образующие первую развернутую часть книги. Очерки расположены в хронологической последовательности с охватом более чем столетнего отрезка времени, от конца XIX столетия до наших дней, при этом, что хотелось бы особенно отметить, от “велика до мала” – классиков армянского традиционного инструментального исполнительства, опытных, маститых исполнителей, вплоть до “подающих надежды”, начинающих в этой области музыкантов, в ряде случаев, пока еще учащихся консерватории, что способствует выявлению преемственности многочисленных поколений армянских традиционных инструменталистов. Автор обстоятельно рассматривает жизненный и творческий путь своих “героев”, по возможности наиболее полно представляя все грани их музыканской деятельности. Это – собственно исполнительство на традиционном инструменте, в ряде случаев и на нескольких, в том числе приспособленных для воспроизведения традиционной музыки, европейских инструментах. (Так, дудукисты, как известно, владеют игрой и на других духовых инструментах, главным образом – зурне, а также шви, паркапзуке (вольтинке), кларнете, таристы играют

и на сазе. Есть и “многопрофильные” музыканты, играющие на инструментах различных классов – кеманче, зурне, шви, или кеманче, аккордеоне и т.д. Нередки и замечательно поющие, особенно ашугскую музыку, инструменталисты). Это и дирижирование, педагогика, создание учебников, пособий игры на том или ином инструменте, нотных изданий, наряду с этим композиторское творчество, концертная и общественная деятельность, изготовление традиционных инструментов и т.д. Представлены также различные региональные школы национального традиционного исполнительского искусства, династии армянских инструменталистов. Оценивается вклад отдельных музыкантов в дело совершенствования конструкции инструментов, приемов игры, расширения исполнительского репертуара.

Каждый из тематических разделов первой части книги предваряется, “и весьма кстати”, содержательным очерком о том или ином традиционном инструменте (так, разделу “Дудукисты” предшествует очерк о дудуке и т.д.), в котором отмечается ареал его распространения, лучшие исполнители, репертуар, “среда обитания”, во второй половине XX, начале XXI веков не всегда традиционная (целый ряд традиционных инструментов в указанный период, как известно, “проник” в композиторское творчество, джазовую музыку, кинофильмы).

Вторая часть книги посвящена одному из наиболее распространенных в армянской среде способов традиционного инструментального музицирования – ансамблевому исполнителству, основные вехи истории которого с древности до наших дней кратко охарактеризованы автором в предисловии к части (“Ансамблевая исполнительская традиция в армянском народном музыкальном искусстве”). Главным достоинством второй части книги является наличие здесь множества фотодокументов, в то числе, как отмечалось выше, крайне редких, которые наилучшим образом иллюстрируют указанные автором типичные для армян за последние сто и немногим более лет виды ансамблей. Это – Восточный ансамбль песни и пляски, ансамбль ашугской песни, ансамбль инструментов одного класса (ансамбль канонистов, ансамбль исполнителей на дооле и т.д.), семейные ансамбли и т.д.

Следует особо отметить являющийся несомненным достоинством настоящей книги, приведенный в ее конце развернутый, доступный не только для армянского, но и иноязычного читателя, трехязычный – армяно–руско–английский сводный список указанных в алфавитном порядке имен и исполнительских профессий более восьмиста старых, новых, известных, забытых, живущих в Армении, за ее пределами армянских инструменталистов. Внушительный по объему, этот список не является полным. Он как бы с продолжением (“продолжение следует”). По мнению Киракосян, список мог быть гораздо более развернутым, если бы не нынешняя некоторая “разбросанность” армянских инструменталистов по различным странам мира, что зачастую препятствует получению информации. Помимо этого, армянское традиционное инструментальное исполнительское искусство, несмотря на свой “почтенный возраст”, к тому же вполне реальную опасность затеряться, раствориться в “дебрях” многоликой современной музыкальной культуры, тем не менее представляется устремленным в завтрашний день, чрезвычайно жизнеспособным художественным явлением, которое, несомненно, будет прославлено еще ни одним поколением будущих армянских музыкантов.

Выходу книги в иноязычную среду способствуют и русско–английский справочный раздел о традиционных инструментах в Армении (“Краткие сведения об инструментах”), с отлично выполненными фотоизображениями описываемых инструментов, а также русское и английское резюме.

Отметим литературу, использованную автором, включающую книги, статьи и даже дипломные работы по теме. Высокой оценки заслуживает полиграфическая культура настоящего издания, почти полное отсутствие в нем типографских опечаток.

Книга Анаит Киракосян – одно из новых, тем не менее, уже востребованных, к тому же прочно и, думается, надолго утвердившихся музыкальных изданий не только в кругу профессиональных музыкантов, но и тех, кто любит и ценит армянское традиционное инструментальное исполнительское искусство.


АНАИТ ОГАНЕСОВНА БАГДАСАРЯН

кандидат искусствоведения, доцент ЕГК

(в сокращении //Голос Армении 28. 01. 2012; 31.01.2012)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Երգ ծայնագրեալք ի ժամագրոց»՝ Զայնագրեալ ժամագիրք հատորը հայ ավանդական՝ մոնողիկ եկեղեցական երաժշտության սովորածավալ ծայնագրեալ ժողովածուներից է: Այն լույս է տեսել 1877 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հայկական նոտագրությամբ, Գևորգ Դ Կաթողիկոսի հրամանով և հովանավորությամբ: Հատորում ընդգրկված է Հայ եկեղեցու ամենօրյա ինը ժամերգությունների ամբողջ եղանակավոր բազմաժանր նյութը:




Առկա հրատարակությունը բնագրի փոխադրությունն է հայկական նոտագրությունից եվրոպականի, որ կատարվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Հայ երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոնում:

«Երգ ծայնագրեալք ի ժամագրոց» ժողովածուն հարստագույն նյութ է բովանդակում հայ եկեղեցական երաժշտությունը հետազոտողի համար: Միաժամանակ, այս հատորից, որպես ստեղծագործական ներշնչանքի անսպառ աղբյուր, կարող են օգտվել ինչպես կատարողները, այնպես էլ կոմպոզիտորները: Այն կարող է գործի դրվել նաև ուսումնառության գործընթացում երաժշտական և այլ ուսումնական հաստատություններում:

Զայնագրեալ ժամագրքի սույն հրատարակությունը լույս է տեսել «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պատրաստմամբ, «Զանգակ-97» տպարանում: Ժողովածուի խմբագիրն է Աստղիկ Մուշեղյանը, փոխադրության խմբագիրը՝ Անահիտ Բաղդասարյանը: Այն նախատեսված է երաժիշտների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայ եկեղեցական երաժշտությամբ, և որոնց հասու է եվրոպական նոտագրությունը:


Աշուղ Հավասու «Վարդերի մեջ, դարդերի մեջ» երգարանը լույս է տեսել «Հայ աշուղական երգերի գանձարան» ժողովածուների շարքում: Հայաստանի Ժողովրդական արտիստ (1967 թ.) Արմենակ Մարկոսյանը՝ Աշուղ Հավասին, XX դարի հայ աշուղական արվեստի դասականներից է: Արդիական է երգիչներին և երաժիշտներին աշուղի մասնագիտորեն պատրաստված ժառանգության մատուցման հարցը, ինչը և իրականացրել է Թովմաս Պողոսյանը «Սայաթ-Նովա» մշակութային միության Աշուղագիտական կենտրոնում: Տարբեր տարիներին հրատարակվել են նրա առանձին երգերն ու երգերի ժողովածուները: Ներկայացվող ժողովածուում ներառվել են այնպիսի երգեր՝ «Աննամ տարագով», «Ախ, մի անգամ էլ գիջերի», «Քույրիկ ջան», «Սևիկ աչեր», «Խռովել գիտես», որոնք Թ. Պողոսյանն անծամբ ծայնագրել է աշուղի ծայնից: Երգերը ժողովածուում դասակարգվել են այբենական կարգով: Մանրակրկիտ պատրաստված է ընդգրկված 51 երգի ցանկը՝ ինչպես ըստ դրանց անվանումների, այնպես էլ ըստ երգերի սկզբածքների: Ժողովածուն տպագրվել է Երևանի «Լուսակն» հրատարակչությունում, խմբագիրն է Աշուղ Ոսկեհուրը, երաժշտական խմբագիրը՝ Լուսինե Նազարյանը:



Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտը հրատարակել է Երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2011թ.) Մարգարիտա Ռուխկյանի կենսամատենագիտությունը: «Հայ արվեստագետների կենսամատենագիտություն» շարքում այն 5-րդն է: Այն ընդգրկում է Մ. Ռուխկյանի 1967-2017 թվականների տպագիր աշխատանքների ցանկը՝ նրա գի-

տական գործունեությունը բնութագրող համառոտ ակնարկով: Ներածականի հեղինակն է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը: Գիրքը բաղկացած է 4 բաժիններից. «Մարգարիտա Ռուխկյան. Արդի Հայ երաժշտության հետազոտողը», «Մարգարիտա Ռուխկյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը», «Մ. Ռուխկյանի տպագիր աշխատությունների մատենագրությունը» այդ թվում գրքեր, հոդվածներ ամսագրերում և ժողովածուներում, միջազգային և հանրապետական գիտաժողովների տպագիր թեզիսներ, հոդվածներ թերթերում և այլն, գրքի վերջին բաժինն է Մ. Ռուխկյանին նվիրված աշխատություններից ցանկը:

Լույս է տեսել Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի հիմնադրման 75-ամյակին նվիրված ծավալուն, պատկերազարդ գիրքը: Հեղինակն է արվեստաբան, թանգարանագետ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սերգեյ Առաքելյանը, որը հիմնադրել է «Հայ մշակույթի մեծերը» մատենաշարը: Այդ շարքի 16-րդ հատորն է նշված աշխատությունը: Հեղինակը տարբեր նյութերով ու վավերագրերով (դիմանկար, խմբանկար, կարծիք, մամուլի հրապարակում, պարզևներ, ողջույնի և շնորհավորանքի խոսքեր) ներկայացնում է թատրոնի չափազանց հարուստ ու բեղմնավոր պատմությունը, տարբեր տարիներին այստեղ աշխատած արվեստագետների (արտիստներ, նկագախումբ, երգչախումբ, բալետ), ինչպես և զեղարվեստավարչական ու տեխնիկական կազմի ստեղծագործական գործունեությունը: Գրքում թատրոնի պատմությունը ներկայացվել է բազմաշերտ արժևորելով թատերագրի, լիբրետտի հեղինակի, թարգմանչի, կոմպոզիտորի, դիրիժորի, ռեժիսորի, վոկալի դասատուի, նկարչի, կոմպերտայստերի, խմբավարի, բալետմայստերի ստեղծագործական աշխատանքն իր բոլոր մանրամասներով: Այս աշխատությամբ կազմվել է թատրոնի շուրջ 8 տասնամյակի բեմադրությունների տարեգրությունը՝ ժամանակագրական ճշգրտությամբ: Սկզբում զետեղված է նախաբանը, ուր հեղինակը ներկայացնում է թատրոնի կազմավորման պատմությունից: Հեղինակ Ս. Առաքելյանն աշխատությունը նվիրել է մեծահռչակ դերասան Կարպ Խաչվանքյանի հիշատակին: Գիրքը լույս է տեսել «Լուսակն» հրատարակչությունում:




«Հայ մշակույթի մեծերը» մատենաշարի հերթական հատորը նվիրված է Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնին: Այս հատորը մատենաշարի հիմնադիր Սերգեյ Առաքելյանի 18-րդ աշխատությունն է: Գրքում թատրոնի պատմությունն սկսվում է ոչ թե 1933 թ. հունվարի 20-ից, երբ բեմադրվեց Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան, այլ համաժամանորեն ներկայացվել է թատրոնի



հիմնադրման նախապատմությունն սկսած 1928-ից: Կատարված է զգալի հավաքչական աշխատանք՝ անձնական արխիվներից, բազմաթիվ թանգարանների պահոցներից ձեռք է բերվել բազմաթույն նյութեր, որոնցով ամբողջացել է թատրոնի հարուստ պատմությունը:

Գրքում առաջին անգամ ըստ ժամանակագրության ներկայացված են թատրոնում աշխատած և հրավիրված դիրիժորները, ռեժիսորները, խմբավարները, բալետմայստերները, նկարիչները և տնօրենները: Պատշաճորեն ներկայացված են թատրոնի երգիչները և բալետի արտիստները, կոմպերտայստերներն ու առաջատար արտիստները, հոբելյանական և հյուրախաղային ներկայացումները: Կարգավորված է թատրոնի տարեգրությունը: Գիրքը տպագրվել է թատրոնի նախածեռնությամբ, «Լուսակն» հրատարակչությամբ:

«Զմոռանաք ի՞մ անունն էլ տալ...»։ Արման Կոթիկյան: Այսպես է անվանվել հայ անվանի դերասան, բանաստեղծ և թարգմանիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1967 թ.) Արման Կոթիկյանին նվիրված գիրքը, որը հեղինակել է նրա դուստր՝ Սեդա Կոթիկյանը: Թատրոնի և կինոյի սիրված դերասանի մասին գիրքը կազմվել է իր խաղընկերների հուշերով, նաև նրա արվեստի երկրպագուների տպավորություններով: Գիրքը բաղկացած է 2 «Կոթիկյանը գրքերում և մամուլում» և «Գնահատանք» բաժիններից, ուր զետեղված են հայ մեծանուն արվեստագետների խոսքերը: Ա. Կոթիկյանի բազմաթիվ դերակատարումների և արխիվային լուսանկարներից բացի, այստեղ ներկայացված են նաև նրա բանաստեղծությունները:



«Կյանքի լարերը. Հուշեր» գիրքը ներկայացնում է անվանի ջութակահարուհի, Դ. Օյստրախի դասարանի ամենավառ ուսանողներից մեկի Ջոյա Պետրոսյանի հուշերը: Գրքում ներկայացված են նրա կյանքի բոլոր շրջանները, որոնք մատուցված են թեթև, կենդանի լեզվով, լի են պատկերավոր մանրուքների նկարագրություններով, ինչպես նաև հումորային երկխոսություններով: Ինչևէ, այն արտիստուհու ստեղծագործական ողջ կյանքի ամփոփումն է և թե ինչպես նա ղեկավարեց ի վերուստ իրեն տրված շնորհը: Գրքում մանրամասնորեն ներկայացնում է ջութակահարուհու մանկության, առաջին դասերի, ուսանողության տարիները, այնուհետև ընտանիքը, աշխատանքը, համերգային և մանկավարժական գործունեությունը, ինչպես նաև իր գործընկերների և իր Մեծ ուսուցչի՝ Դ. Օյստրախի մասին: Ի դեպ, վերջինիս հետ կապված է մի զավեշտալի դրվագ. Ջ. Պետրոսյանը Մոսկվայի կոնսերվատորիայի ընդունելությունից հետո նախապես նշանակվում է մեկ այլ պրոֆեսորի մասնագիտական դասարան Օյստրախի փոխարեն: Օյստրախը խոստանում է գրուցել դեկանի հետ և դուրս գալով նրա մոտից՝ կատակում է. «Не вешайте нос на квинту, Вы у меня в классе»:

Գիրքը գրված է ռուսերեն («Струны жизни: Воспоминания»), խմբագիրն է Նատալիա Վինոգրադովան: Այն լույս է տեսել Մոսկվայում, «Полиграф сервис» հրատարակչությունում, 2016 թ.: Հուշերի հետ ներկայացված են նաև Ջ. Պետրոսյանի բեղուն ստեղծագործական կյանքը պատկերող բազմաթիվ լուսանկարներ, ինչպես նաև նրա ինքնակենսագրականը:



ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՅՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄՍՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՇ ԱՌԵՎՏՐՈՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված է 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵԴԿ ՊՈԼԿ
ՍԵՐԳԵՅ ՄԱՐԿՍՅԱՆ, ԳՈՅԱՐ ՀԱԳՈՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ ՇՈՒՐԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՅԱՐ ՀԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԳՈՅԱՐ ՀԱԳՈՅԱՆ, ՍՈՖԱ ԱՅՆԱՊԻՐՅԱՆ (ռուս.)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՅԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համաժողով է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Տպագրմանը՝ 200: Ծավալը 12 էջ: Ստորագրված է տպագրության 28.03. 2018: Տպագրվում է՝ «ԳԵՎՈՐԳ ԵՎ ՀՐԱՅՐ» ՄՊԸ տպարանում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունն նշված հասցեով.

0001, ք.Երևան, Սայաթ-Նովա 1ա
հեռ.: (+374 10) 523 993+118
Ֆաքս՝ (+374 10) 563 540,
http://www.conservatory.am,
E-mail: yksc@conservatory.am,
E-mail: YSCPublishingHouse@conservatory.am

